

Օ՞ Ս Ո ՞ Ճ Ա ՞ Ե ՞ Շ Ա ՞ Ր Ե ՞ Վ Ա ՞ Ւ

# ՄԵՐ ԿՅԱՆՔՆ ԱՍՏԾՈ ՀԵՏ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԶԵՂՆԱՐԿ

14 ՏԱՐԵԿԱՆ

ԴԱՍ 1-18

ՀՏԴ 23/28(07)

ԳՄԴ 86.37 ց72

Մ 660

Մ 660 Մեր կյանքն Աստծոն հետ: Դպրոցական միջին տարիքի աշակերտների քրիստոնեական ուսուցման ձեռնարկ (14 տարեկան): Սբ. Եջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, - Եր.: «Անտարես», 2005. – 130 էջ:

Մ  $\frac{040100000}{0130(01) - 2005}$  2005

ԳՄԴ 86.37 ց72

ISBN 99941-57-09-4

© World Vision Armenia, 2005  
© Gospel Light Worldwide, 2005

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՀՐԱՄԱՆԱԴ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐքի ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

**ԽՄՔԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԸ՝**

**ՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՔԱՌԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ՏԵՐ ՂԵՎՈՆԴ ՔԱՌԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ**

**ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅՈՒՆԻՎԵՐՏԻՑ ՅՈՒՆԻՎԵՐՏԻՑ  
ՄԻՋԱՋԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ**



**ԵՎ GOSPEL LIGHT WORLDWIDE ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**


**ՇԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ ՅՈՒՆԻՎԵՐՏԻՑ ԱԲՐԱԿԱՄՅԱՆԻ**

## ԱԴԱՄՆ ՈՒ ԵՎԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ



**«Ես և իմ տունը պաշտելու ենք Տիրոջը»:**  
Հետու 24:15

Տեր Աստված նախ երկինքն ու երկիրը, բուսական ու կենդանական աշխարհն արարելուց



հետո կավահողից սփեղձեց մարդուն: Աստված նրան կոչեց «Աղամ», որը երրայերեն լեզվով նշանակում է «հող»: Եւ երբ Տերը նրա դեմքին փէց իր Հոգին, նա կյանքի կոչվեց:

Ապա Տերը պարփեզ դժուկեց և անվանեց այն Եղեմ՝ գետերով և բոլոր գետակի գեղեցիկ ծառերով

ու բույսերով, որոնք կերակուրի համար էին:

Պարփեզի մեջքնում կային երկու ծառեր՝ կյանքի ծառն ու բարու և չարի գիրության ծառը: Աստված բնակեցրեց Աղամին պարփեզում և պարփիրեց այն մշակել:

- Եու կարող ես ազարորեն ուփել պարփեզի բոլոր ծառերի պարուներից, - ասաց Աստված Աղամին, - բայց դու չափիքի ուփես բարու և չարի գիրության ծառից: Երբ ուփես, - զգուշացրեց Տերը, - լուրջ **հետևանքի** առջև կկանգնես՝ կմահանաս:

Տեսնելով, որ Աղամի համար լավ չէր մնենակ ապրել, Տեր Աստված կին սփեղձեց իբրև Աղամին ընկեր և օգնական: Երբ Աղամը դեռապ կնոջը, ուրախացավ և ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից»: Աղամը անվանեց կնոջը «Եվա», որը երրայերեն «կյանք» բառն է, որովհենքն նա պիփի լիներ մայրը բոլոր կենդանի և ակների: Աստված պարփիրեց Աղամին և Եվային խաղաղ ապրել պարփեզում, և Տերը հոգում էր նրանց բոլոր կարիքները:

Մի օր Եվան հանդիպեց օձին, որը հարցրեց նրան բարու և չարի գիրության ծառի մասին: Եվան գիրեր, որ Տերը պարփիրել է իրեն և Աղամին չուփել այդ ծառից, որովհենքն կմահանան:

- Եութ չեք մահանա, - պարփասխանեց օձը, - Աստված գիրի, որ երբ ուփեք այս ծառի պարփից, ձեր աչքերը կրացվեն, և դուք կնմանվեք Աստվուն՝ ճանաչելով բարին և չարը:

Առանց մարդելու իր արածի հետևանքների մասին՝ Եվան կերավ բարու և չարի գիրության ծառի պարփից: Ապա նա պարփից մի քիչ դժուկ Աղամին, ով նույնպես ճաշակեց դրանից: Միանգամից նրանց աչքերը բացվեցին: Այսպիսով,

## ԴԱՍ 1

մինչև պարզ ուգելը նրանք ճանաչում էին միայն բարին, բայց հիմա փորձեցին նաև չարք՝ ինչպես օձը խոսքացել էր:

Գիրակցելով, որ չպահեցին Ասպծո պարվիրանը, նրանք թաքնվեցին և թզենու գերևներով ծածկեցին իրենց մերկությունը:

Այդ ժամանակ Աղամը և Եվան լսեցին Տեր Ասպծո ձայնը պարբեզում.

- Որդե՞ն եք, - կանչեց նրանց Ասպծած:

- Ես լսեցի Ձռ ձայնը պարբեզում և թաքնվեցի, որովհետք մերկ էի, - բացաբեց Աղամը:

- Ո՞վ ասաց քեզ, որ մերկ ես, - հարցրեց Ասպծած, - չինի՞, թե կերար այն ծառի պարոից, որը Ես պարվիրել էի չուփել:

Աղամը մեղադրեց Եվային իրենց **մեղքի** համար, իսկ Եվան մեղադրեց օձին՝ իրեն խարելու համար:

Աղամի և Եվայի մեղքի պարբառով Ասպծած արդարսեց նրանց Եղեմի պարբեզից և պահապան իրեշտակներ նշանակեց Եղեմի մուտքի առջև, որպեսզի նրանք այլևս ներս չմտնեն: Ասպծած Աղամին ասաց, որ բառապանքով պիտի սնունդ հայթայթի կյանքի բոլոր օրերում: Իսկ Եվային ասաց, որ մեծ ցավերով պիտի երեխա ծնի և հնազանդվի ամուսնուն: Եվ վերջապես, անհնագանդության պարբառով Ասպծած ասաց Աղամին և Եվային, որ պիտի կրճադրվեն նրանց կյանքի օրերը. «Երեսիդ քրդինքով պիտի ուզեն հացդ մինչև հոդ դառնալդ, որից սպեղծվեցիր, ու հոդ էիր և հոդ կդառնաս»:

## ԱՐԵՎՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



**Մեղք** - հունարենում այս բառն է «ամարթիա», որը նշանակում է սխալվել, ձախողվել, նպարակին չհասնել: Աղամը և Եվան «ձախողվեցին», չհնվենելով Ասպծո պարվիրանին, և մեղք գործեցին: Եթր մենք թերանում ենք ապրել Ասպծո պարվիրանների համաձայն, նոյնպես մեղք ենք գործում:

**Դետ-անը** - այն է, որ պարահում է լավ կամ վար արարքի արդյունքում: Եթև Աղամը և Եվան հետքենին Ասպծո պարվիրանին, հետքեանքը կլիներ հավիրենական կյանքը: Մեղք գործելով նրանք դադապարպվեցին մահվան:

**Ազատ կամք** - Ասպծած սպեղծել է մեզ ազադ կամքով, այսինքն կարող ենք ընդունել այն, ինչ որ ցանկանում ենք անել կամ՝ չանել: Աղամը և Եվան հնարավորություն ունենին ընդունելու Ասպծո պարվիրանին հնազանդվելը, կամ օձի դադարք խոսքումներին լսելը: Առանց մրածելու իրենց որոշման հետքեանքների մասին, նրանք ընդունեցին օձին լսելը, որով էլ մեղանչեցին Ասպծո առաջ:





## ՊՐԵՆԶ ՄԵՐ ճՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ



### Մարիամն ասաց՝ «այո», մինչդեռ Եկան ասաց՝ «ո՛չ»

Ամեն գրաքաղաքական մեր Սուրբ Եկեղեցին նշում է Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի Վվելուման գոյնը:

Մարիամը Հովակիմի և Աննայի դուսպրն էր: Երեք գարին լրանալուց հետո իր ծնողները նրան գանում են Երուսաղեմի գաճար, ուր նա սովորում է սիրել Ասպծուն:

Հովակասի Ավելարանի 1:26-3 հասրվածում կարդում ենք, թե ինչպես մի օր, երբ Մարիամը չափահաս էր, Գարրիել հրեշտակապետը երևում է նրան և հետքայա խոսքերով ողջունում. «Ուրախացի՛ր, ով շնորհընկալ, Տերը քեզ հետ է: Օրինյա՛լ ես դու կանանց մեջ»:

Մարիամը շփորվեց այս խոսքերից: Նա հիշեց, թե ինչպես օձը խարեց Եվային Եղեմի պարփեզում:

- Մի՛ վախեցիր, Մարիամ, - ասաց հրեշտակապետը, - դու շնորհ ես գոյել Ասպծո առաջ, դու պիտի հղիանաս և մի որդի պիտի ծնես և նրա անունը պիտի դնես Հիսուս:

Մարիամը ցնցվեց այս խոսքերից:

- Ինչպե՞ս դա կարող է լինել, - հարցրեց նա:

- Սուրբ Հոգին կիշնի քեզ վրա և Ասպծո զորությունը հովանի կիշնի քեզ, որովհետք քեզանից ծնվածք սուրբ է և Ասպծո Որդի պիտի կոչվի:

Մարիամը գալապին վախենում էր, որ կարող էր Եվայի նման սխալ ընդունություն կարարել:

- Ասպծո համար անհնարին բան չկա, - Մարիամին վսրահեցրեց Գարրիել հրեշտակապետը:

Հավասպիանալով, որ հրեշտակապետը չի խարում իրեն, ինչպես օձը՝ Եվային, Մարիամը խոնարի պարագանեանց. «Ահավասիկ ես Տիրոջ աղախինն եմ, թող քո խոսքի համաձայն լինի ինձ»:

Եկեղեցական գրականության մեջ Մարիամը հաճախ կոչվում է «Նոր Եվա», քանի որ առաջին Եվան սխալ ընդունություն կարարեց և կրեց դրա հետքանքները, Մարիամը՝ «Նոր Եվան», ճիշդ ընդունություն կարարեց, որի արդյունքում Հիսուս Քրիստոս՝ «Նոր Աղամը», մարդկային մարմին սպացավ, և մընելով մարդկության պարմության մեջ, փրկություն բերեց աշխարհին:



## ԱՎԱՏՔԸ ԳՈՐԾՈՎ

### Հրեշտակը և Սատանան

Մենք պեսք է միշտ մփածենք որևէ զործ անելուց առաջ և հարցնենք ինքներս մեզ. «Եթե ընդուն այս կամ այն բանը անելու, ի՞նչ կիշնի իմ արածի հետքանքը: Իմ ընդունությունը ինչպե՞ս կազդի ինձ և մյուսների վրա»:

## ԴԱՍ 1

Հաճախ մենք մոռանում ենք մփածել մեր արածի հետեւանքների մասին: Մեզ թվում է, թե չենք կարող որոշել, թե ինչ ընդուժություն պեսք է կապարենք: Սպացվում է այնպես, որ մի կողմից մեզ ձգում է հրեշտակը մի ուղղությամբ և միաժամանակ սափանան ձգում է մեզ այլ ուղղությամբ: Մենք հաճախ կապարում ենք մեր մփրին և կած առաջին խոկ բանը, առանց մփածելու, թե այն ինչ ազդեցություն կգործի մեզ և մեր շրջապատի վրա: Վեամի և Եվայի նմանությամբ մենք ևս գործում ենք, մեր արարքի հետեւանքների մասին չմփածելով, և միայն ավելի ուշ անդրադառնում, որ մեր սիալ ընդուժություն կապարելու պարճառով է վագրարացել իրադրությունը:

**Ուշադի՛ր լսեք ձեր ուսուցչի տված ցուցումները, եղք ճա հանձնարարի ձեզ խաղալ «հրեշտակ» ու սատանան»:**

Պարկերագրե՛ք մի իրավիճակ, երբ պեսք է դժվար մի ընդուժություն կապարել:

Օրինակ՝ Արամը զգնում է մի դրամապանակ, որի մեջ լինում են զումար և սեփականափիրոջ անձնազիրը: Նա ճանաչում է դրամապանակի փիրոջը և կարող է վերադարձնել նրան: Սակայն նա միաժամանակ մփածում է իրեն պահել դրամապանակը, որովհետև կարող է օգտագործել զումարը:

Հրեշտակը ի՞նչ կքաջալերեր նրան անել: Խոկ ի՞նչ սափանան կառաջարկեր:

## ԱՍՏԵԼՈՒ ՀԱՍՎՐ

### Կատարել ճիշտ ընտրություն

Փորբիկները սովորաբար հիանում են կրակով: Նրանց գրավում է դրա գույնը, շարժումը և բացառիկ ձայնը: Շար հաճախ իրենց հետաքրքրությունը բավարարելու համար նրանք փորձում են ձեռք բալ կրակին՝ հակառակ ծնողների զգուշացումների:

Խոկ դրա պարճառն այն է, որ երեխաները ուղղակի զգիքն, թե ինչ է նշանակում «այրվել», որովհետև նրանք երբեմն չեն ապրել այդ զգացողությունը: Եթե նրանք դնեն իրենց ծնողները կրակի վրա, ապա կսովորեն, որ ցավը իրենց արարքի հետեւանքն է:

Աղամը և Եվան նման էին փորբ երեխաների: Քանի դեռ նրանք վայելում էին Ասպծո բարությունը, երբեք չէին զգացել չարն ու մահը: Հակառակ Ասպծո զգուշացման, նրանք ընդունեցին Տիրոջը չինազանդվելը և անմիջապես զգացին իրենց կապարած ընդուժության հետեւանքը: Ասպված դպիկ էր Աղամին և Եվային ազաք կամք՝ ինքնուրույն որոշելու կարողություն, որին բան անելու կամ չանելու: Դժբախտաբար, նրանք սիալ ընդուժություն կապարեցին:

Ասպված մեզ դպիկ է ազաք կամք: Մենք ազաք ենք որոշելու, թե ինչպես ապրենք, ինչ խոսենք և գործենք, ինչպես վերաբերվենք մյուսներին և ինչպես վարվենք Ասպծո, որիշների և ինքներս մեզ հետ: Երբեմն մենք կապարում ենք ճիշտ ընդուժություն, երբեմն է՝ մեղանչում ենք սիալ ընդուժություն կապարելով: Երկու դեպքում ել մենք կրում ենք մեր կապարածի հետեւանքները:

Չնայած Աղամին և Եվային զգուշացվել էր Ասպծո պարվիրանին չինազանդվելու հետեւանքների մասին, այդուհանդերձ, նրանք թերացան հինազանդվել Տիրոջը: Այս խոկ պարճառով մենք պեսք է լավ իմանանք և միշտ իիշենք, որ պեսք է մփածել ընդուժությունների և արարքների մասին՝ մինչ դրանց կապարելը: Ասպված օժիք է մեզ ազաք ընդուժություն կապարելու շնորհով: Մնացածը մեր գործն է՝ մեր ազաք կամքով ընդունելու և իրականացնելու Ասպծո կամքը մեր կյանքում:

## Ինչպես աղետը է վարվեր Արտակը

Արդակն ուներ սովորական մի վերարկու, որն այնքան շատ փաք չէր: Եթե նղանակը ցրվեց, այն հազիվ էր փաքացնում նրան, և նա հաճախ մրսում էր դպրոց կամ իր ընկերների գոտու գնալիս: «Երանի փաք վերարկու ունենայի, իմ ընկեր Կարենի վերարկուի նման», - հաճախ մրածում էր Արդակը ձմռան ցուրփ օրերին:

Մեկ օր դպրոցում Արդակը նկագեց, որ իր ընկեր Կարենը վերարկուն թողել է դասարանի սեղանի վրա: Յանկանալով վերադարձնել վերարկուն՝ Արդակը ամենուր փնտրեց Կարենին, բայց չկարողացավ գտնել: Ապա մրածեց. «Եթե ինձ վերցնեմ Կարենի վերարկուն, այլս չեմ մրսի: Ես վերջապես կունենամ փաք վերարկու: Կարենը երբեք չի իմանա, որ ես եմ վերցրել այն»:

Այսպիսով, Արդակը որոշեց Կարենի վերարկուն թաքցնել իր պայուսակի մեջ և իր հետ փուն փարավ: Մի քանի շաբաթ հետո նղանակը ցրվեց: Արդակը միամբար հազար Կարենի վերարկուն և գնաց դպրոց: Կարենը դեսավ իր վերարկուն նրա հազին:

- ❖ Ի՞նչ եք կարծում, Կարենն ինչպես արձագանքեց, եթե դեսավ իր վերարկուն Արդակի հազին:
- ❖ Ի՞նչ եք կարծում, նա ի՞նչ ասաց Արդակին:
- ❖ Ինչպիսի՞ հետևանքների հանդիպեց Արդակը Կարենի վերարկուն գողանալն ընդունուելու պարճառով:
- ❖ Սա ինչպես կազդի Արդակի և Կարենի ընկերության վրա:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ո՞րն է հիմնական միտքը Ծննդոց 2:4ր - 3:24 գլուխներում: Շարադրեք պատմությունը ձեր բառերով:
2. Աղամը և Եվան ինչո՞ւ չհնագաղվեցին Ասպծուն:
3. Ի՞նչ է մեղքը: Ինչո՞ւ է այն նշանակում ձախողում, սիսալվել և Ասրված ինչպես է ուզում, որ մենք ապրենք:
4. Ասրված ինչո՞ւ թույլ փվեց, որ Աղամը և Եվան սիսալ ընդունություն կարարեն: Կարո՞ղ էին արդյոք նրանք այլ ընդունություն կարարել և չլսել օձին:
5. Ի՞նչ է ազաք կամքը:
6. Ո՞ւմ մեղքով է, որ մենք սիսալ ընդունություն ենք կարարում: Կարո՞ղ են մեզ սփիզել կարարելու ընդունություն, որը մենք չենք ցանկանում անել: Բերեք օրինակներ:
7. Որո՞նք էին Աղամի և Եվայի մեղքի հետևանքները:
8. Կարո՞ղ էր Մարիամը Եվայի նման «ոչ» ասել Ասպծուն: Ինչո՞ւ չասաց:
9. Որո՞նք են մեր կյանքում սիսալ ընդունություններ կարարելու հետևանքները: Բերեք օրինակներ:

## ԶԵՐ ՏԵՏՐԱԿՈՒՄ

Գլուխ որևէ թերթի հոդված, որպեսով օրինակ է թերված մեկի կարարած սիսալ ընդունության և դրա հետևանքով պարմվելու մասին: Փակցրեք թերթից հանգած հոդվածը ձեր դեսավակում: Տամառութագրեք բացապրելով, թե ինչո՞ւ փվյալ անձը սիսալ ընդունություն կարարեց և ի՞նչ պետք է աներ դրա փոխարեն:

## ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Հավաքվեք ընդանիքի անդամներով և զրուցեք ընդրություն կարարելու մասին:

Անհրաժեշտ է ունենալ Ասպվածաշունչ, մի սրբարարուղթ 30x45 սմ չափսի, մկրապ, կպչուն ժապավեն կամ սոսինձ, զունավոր մագիստրուս և գրիչներ:

Ծնողները պետք է սկսեն քննարկումը՝ պարասխանելով հետևյալ հարցերին՝

❖ Ինչպե՞ս ընդրեցիք ձեր յուրաքանչյուր երեխայի անունը:

❖ Կա՞ն հարուկ երգեր, խաղեր կամ պարմվածքներ, որ դուք ընդրել եք սովորեցնելու ձեր երեխաներին՝ նրանց փոքրիկ հասակում։ Վրյոք դուք հարուկ նպատակո՞վ եք ընդրել, դրանք ձեզ դուք էի՞ն զալիս, թե դրանք բարի պարզամ ունեին փառու ձեր երեխային։

«Դիմա ընդանիքի կրթութեր անդամները կարող են հերթով պարասխանել հետևյալ հարցերին՝

❖ Կարո՞ղ եք միաբերել անցյալ շաբաթվա մեջ ձեր կարարած մի ընդրություն, որը բարի ավարտ ունեցավ։ Որո՞նք էին ձեր ընդրության լավ հետևանքները։ (Թեր—ս դուք ընտրել եք լրացուցիչ պարապելը, որի արդյունքում բարձր գնահատական եք ստացել ստուգողական քննությունից։ Կամ, թեր—ս դուք ընտրել եք ջանադրաբար օգնել ձեր ըմբերոջը, ով դժվարին վիճակի մեջ էր, — իիմա ավելի եք մտերմացել նրա հետ):

Մենք գիտենք, որ ամեն մեկը ընդրություն կարարելու իրավունք ունի։ Գիտենք նաև, որ Ասպված փվել է մեզ ազար կամք, որպեսզի կարարենք այդ ընդրությունը։

Մարիամ Ասպվածածինը մեզ համար մեծազոյն օրինակն է, ով ընդրեց Ասպծո կամքը։ Եվ նրա ընդրության շնորհիվ Շնուռ Քրիստոս ծնվեց, որպեսզի մեր մեջ ապրի և հավիտենական կյանք մեզ պարզավի։

Ասպվածաշունչը մեզ պարմում է շաբ մարդկանց մասին, ովքեր ընդրեցին Ասպծուն հնագանդվելը՝ ինչպես Մարիամը։ Կան նաև պարմություններ այն մարդկանց մասին, ովքեր ընդրեցին Ասպծուն չհնագանդվելը՝ ինչպես Եվան։

Վյոր եկե՛ք ծանոթանանք, թե Ասպվածաշունչը ի՞նչ է պարմում մի ընդանիքի մասին, որը բացահայտ կերպով հայտարարեց, որ իր ընդրությունը Ասպծո կամքին հետևելն է։

Վյո պարմությունը Շնուռի՝ իրեա ժողովրդի մեծ առաջնորդի մասին է։ Մի օր Շնուռն կանչում է ողջ ժողովրդին և հիշեցնում նրանց, որ խոսքացել են հավաքարիմ մնալ Ասպծուն։ Նա հիշեցնում է նաև, որ իրենց հայրերը երբեմն մոռացել են ճշմարիք Ասպծուն և երկրպագել կուռքերին և շասպվածներին։ Կարդացնք, թե ինչ է ասում նա իր ժողովրդին **Շնուռ 24:15** համարում։

Պարբռասփե՞ք պարի թերթ՝ օգբագործելով Շնուռի բառերը. «Ես և իմ գունը պաշտելու ենք Տիրոջը»։ Ընդանիքի անդամները կարող են մասնակցել պարի թերթի կազմությանը։ Մենք կարող ենք գունը բառերը պարկերազարդ մեծ դառներով։ Մյուսները կարող են պարբռասփել թերթի եզրագծերը զունավոր մագիստրուս ու գրիչներով, կամ կարող են զարդարել թղթի առանձին փոքր կտորներ և փակցնել դրանք եզրերին։ Եզրագիծը կարելի է կազմել նաև այլ ձևով։ Թող ընդանիքի յուրաքանչյուր անդամ պարբռասփի իր ընդրությամբ ընդանիքի մյուս անդամի փոքր նկարը։ Շնոր նկարները կարող են փակցվել պարի թերթի եզրերին։

Ավարդելուց հետո պարի վրա հարմարեցրե՛ք և կախե՛ք թերթը, որը դեսանելի լինի ընդանիքի անդամներին և այցելուներին։ Վյո պարի հիշեցնի բոլորին, որ ձեր ընդանիքը ընդրել է Ասպծուն ծառայելու և հետևելու ուղին։

## ԿԱՅԵՆ ԵՎ ԱԲԵԼ. ՃԱՆԱՉԵԼՈՎ ՄԵՐ ՇՆՈՐՅԱՆԵՐԸ



**«Մատուցեցեք Տիրոջը փառքն Իր անվան,  
ընծաներ վերցրեք ու մտեք սրահները Նրա»:  
Սաղմոս 95:8**

Աղամբ և Եվան ունեցան երկու որդի՝ Կայենին և Արելին: Կայենը՝ ավագ եղբայրը, հողազործ էր, իսկ կրտսեր եղբայր Արելը՝ հովիվ:

Մի օր Կայենը և Արելը ընծաներ մաքուցեցին Տիրոջը: Կայենը բերեց իր աճեցրած բերքից, իսկ Արելը՝ իր պահած կենդանիների առաջնեկներից ու գերերից: Ասպված զոհ մնաց Արելից և նրա ընծաներից, իսկ Կայենի ու նրա ընծաների վրա



ուշադրություն չդարձեց: Կայենը նախանձեց իր եղբորը և բարկացավ:

Թեև Ծննդոց զիրքը սպոյզ չի բացաբրում, թե ինչո՞ւ Ասպված նախընդրեց Արելի ընծաները, իսկ Կայենը՝ ոչ, բայց մենք հավաքում ենք, որ այդպես եղավ, որովհետք Կայենը մաքուցեց Ասպծուն միայն իր բերքի մի մասը և այն՝ ինչ մաքուցեց,

լավագույնը չէր իր աճեցրածից: Արելը մաքուցեց իր մաքդաշ կենդանիներից լավագույնին: Ասպվածաշունչը միայն ասում է, որ Կայենը նախանձեց Արելին: Իրականում, Կայենն այնքան նախանձեց Արելին, որ սպանեց նրան, երբ միասին դաշիւում էին զգնվում:

- Ո՞ւր է քո եղբայր Արելը, - հարցրեց Ասպված Կայենին:

- Զգիրեմ, - պատրասխանեց Կայենը, - մի՞թե ես իմ եղբոր պահապանն եմ:

- Այդ ի՞նչ արեցիր, - հարցրեց Ասպված, իմանալով, որ Կայենը սպանել էր իր եղբորը, - քո եղբոր արյան կանչը երկրից բռնորում է ինձ:

Ասպված ասաց Կայենին, որ իր մեղքի պատճառով նա այլս հողազործությամբ չպիտի զբաղվի, և հողն այլս բերք չպիտի փառքան լի չանա մշակել: Ասպված ասաց, որ նա թափառական պիտի լինի երկրի վրա:

Կայենը վախեցավ, որ իրեն հանդիպող որևէ մեկը կսպանի իրեն, և Ասպված նշան դրեց Կայենի վրա, որ ոչ ոք նրան չսպանի: Ներդ նա հետացավ Տիրոջ ներկայությունից և բնակվեց Եղեմի արևելքում, Նայիդ երկրում:

Իր ծնողների նման Կայենը դրառապեց իր գործած մեղքի պատճառով և արփաքսվեց իր վրնից, քանի որ սպանել էր հարազաք եղբորը և պիտի փանջվեր այնքան ժամանակ, որքան որ ապրեր:



## Կենդանի խաչքար

Մեր Եկեղեցիները, վանքերը և նրանց շրջապարագները զարդարված են խաչի պարկերով փորագրված մեծայիր քարերով, որոնք կոչվում են խաչքարեր: Զրիսպոսի սուրբ և ամենափրկիչ խաչի նկարմամբ ունեցած հայ ժողովրդի առանձնահափոկ սիրո և հավաքի վկայությունն են խաչքարերը: Միջնադարյան հայ Եկեղեցական արվեստի գեղեցիկ նմուշներ են խաչքարերը, որոնք, որպես պաշտամունքային առարկաներ, հաճախ փոխարինել են սրբապարկերներին: Մեր հավաքավոր նախահայրերը անթիվ խաչքարեր են կերպել: Նշանավոր խաչքար կերպողներ են Եղել Միիթար Վարպետը (12-րդ դար), Մոմիկը, Պողոսը (13-րդ դար), Զիրամ Վարպետը և որիշներ: Դարերի ընթացքում շափ խաչքարեր են ոչնչացվել թշնամիների կողմից: Բարեխափառար, այսօր դրանցից շափերը փրկվել են և մեզ հասել: Նեփաբրրական է, որ չկան միանման երկու խաչքարեր: Իրենց եզակի կերպվածքով նրանք նաև լրացնում են իրար՝ կազմելով մեկ ամբողջություն Եկեղեցում:

Իրենց բացառիկությամբ խաչքարերը նման են մեզանից յուրաքանչյուրին: Ինչպես Պողոս առաքյալն է ասում, որ չնայած Ասպած օրինել է մեզանից յուրաքանչյուրին յուրահափոկ շնորհներով և դադանդներով, այդուհանդերձ բոլորս միասին մեկ Եհսուս Զրիսպոսով՝ որպես «կենդանի խաչքարեր»:

**Ուշադիր լսեք ձեր ուսուցչի հանձնարարականները խաչքար պատրաստելու համար:**



## Ի՞նչ պետք է մատուցեմ Տիրոջը

Որպես Նայասպանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գավակներ՝ մենք կոչված ենք մեր փուրքը մարդուցելու Ասպծուն՝ ի նշան երախփափիպության Իր փառած շնորհների համար:

Մեր շնորհակալությունը Ասպծուն հայփնելու մեծագույն ձևը Սուրբ և Անմահ Պապարագին մասնակցելն է: Պապարագի ընթացքում մոմ ենք վառում սրբանկարի առջև, Ասպծուն մարդուցում մեր սրբարուի աղոթքը, փառաբանությունը և լնդունում Սուրբ Նաղորդությունը՝ պապարագիչ Եկեղեցականի աղոթքներով պրազործված հացը և զինին՝ Եհսուս Զրիսպոսի մարմինը և արյունը: Սուրբ Պապարագի ժամանակ մենք նաև ինքներս մեզ ենք մարդուցում Տիրոջը՝ զոհություն հայփնելով Իր շնորհների և մանավանդ մեզ կյանք պարզելու համար:

Սուրբ և Անմահ Պապարագին ներկա գդնվելուց առաջ մենք պետք է մի կողմ թողնենք մեր մեղքերը՝ նախանձը, բարկությունը և կամ վափ վերաբերմունքը մյուսների հանդեպ և խոսքովանելով ու ներում խնդրելով՝ հաղորդություն սպանալ:

«Եթե սեղանի վրա քո ընծան մաքուցելու լինես, և այնպես հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թո՞յ սեղանի առաջ և գնա՞ նախ հաշվվի՞ր քո եղբոր հետ և ապա եկ քո ընծան մաքուցի՞ր», - պարպիրում է մեզ Դիտու Քրիստոսի Ավելատարանի 5:23-24 հայրվածում:

Այսպես մեր Տերը ուսուցանում է մեզ, որ Ասպծոն մաքուցելու մեր պատրաստակամ ոգին նոյն կարևորություն ունի, ինչ մեր մաքուցած ընծաները: Ի դարձներություն Արելի, ով ցանկացավ Ասպծոն մաքուցել իր ունեցածից լավագույնը՝ իրրև իր սիրո արփահայրություն, Կայենը պահեց իր ունեցածից լավագույնը՝ Ասպծոն մաքուցելով մնացածներից: Այսպիսով, նա թերացավ արփահայրել իր սերը Ասպծոն հանդեպ, և Ասպված ջրնդունեց նրա ընծան: Նույն կերպ, մենք չենք կարող դրսերել ճշմարիկ սեր Ասպծոն նկարմամբ, եթե չենք սիրում ուրիշներին կամ երբ բարկացած ենք, նախաձով և աններողամիտ:

Եկեղեցի մըրնելիս, և հավկապես Սուրբ Հաղորդություն սպանալուց առաջ պեսք է խոսքովանենք մեր մեղքերը և խնդրենք Ասպծոն, որ մեզ ների իր և մյուսների դեմ գործած մեր մեղքերը: Պեսք է խնդրենք ներողամքությունը նրանց, ում դեմ մեղանչել ենք, և կարողանանք ներել նրանց, ովքեր մեղանչել են մեր դեմ: Ապա միայն կարող ենք մաքուցել մեր ընծաները Ասպծոն: Այս ամենը պեսք է կապարենք ուղիղ մքրով, որպեսզի ցոյց բանք մեր սերը Տիրոց և մյուսների նկարմամբ:

## ՏԱԾԵԼՈՒ ՀԱՍՎՐ

### *Մեզանից յուրաքանչյուրը եզակի է*

Ասպված մեզանից յուրաքանչյուրին օժիտել է յուրահավուկ շնորհներով և դադանդով:

Մեզանից ոմանք ունեն երածշփական կարողություն, իսկ ոմանք զերազանց են սպորտից, ոմանք ուժեղ են մաթեմատիկայից, իսկ ոմանք գրելուց, ոմանք ճարպարախու են, ոմանք էլ լավ ունկնդիրներ: Զկան երկու հոգի, որ ճշգրիկ նույնը լինեն: Մեզանից յուրաքանչյուրը եզակի է:

Միաժամանակ, մենք ունենք ընդհանուր բաներ: Բոլորս ունենք ազատ կամքի շնորհը: Բոլորս ակնկալում ենք ապրել ներդաշնակ մյուսների հետ: Եվ բոլորս կոչված ենք սիրելու Ասպծոն և սիրելու մյուսներին: Հակառակ մեր բացառիկության՝ մենք շաբ ընդհանրություններ ունենք մեր նմանների հետ:

Երբ մենք ընդգծում ենք մեր դարբերությունները և նախանձում ենք ուրիշների ունեցածներին և արածներին, խուսափում ենք Ասպծոն կամքը կապարելուց: Պեսք է զնահապենք մեր սեփական ունակությունները, դադանդու և ուրիշների կարողությունները և ընդունենք, որ մեր ունեցած ամեն ինչ Ասպծոն պարզեն է: Մենք պեսք է ուրախանանք ուրիշների ձեռքբերումներով, ինչպես մեր հաջողություններով: Մեկս մյուսի դեմ մրցելու փոխարեն, պեսք է սովորենք բարեխոսել մեկս մյուսի համար: Երբ մենք միասին օգբագործում ենք մեր բոլոր ձիրքերը Ասպծոն փառքի համար, աշխարհը դառնում է ներդաշնակ վայր և գենառում ենք, թե որքան կարիքն ունենք մեկս մյուսի վսպահության: Բայց երբ նախանձում ենք մյուսներին, հնարավոր է, որ մեր խոսքով և արարով վիրավորենք նրանց: Այսպիսի դեսպերում մենք պեսք է նրանց հետ հաշվվենք՝ ներելով նրանց, և խնդրենք, որ Ասպված թողություն պատ մեզ մեր վար արարքների համար:

### *Ինչպես պեսք է կարվեր Անին*

Անին և Նանեն մքերիմ ընկերուիիներ էին փոքր հասակից:

Նանեն աչքի էր ընկնում իր բարեհամբույր բնավորությամբ: Նա ուներ հումորի լավ զգացողություն

### ԱՐԵՎՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Նախանձ** - երբ նախանձում ենք մարդկանց, վասր զգացողություն ենք ունենում նրանց նկարմամբ, որովհետք ուզում ենք ունենալ նրանց ունեցածը կամ անել այն, ինչ նրանք են կարողանում անել: Կայևնը նախանձեց իր եղբոր՝ Արելին, որովհետք Աստված ընդունեց Արելի ընձան: Նախանձը կարող է մեզ բարկացնել մյուսների նկարմամբ և նույնիսկ նրանց հետ անմարդկային և դաժան վարվելու պարբռառ հանդիսանալ:

**Դաշտություն** - երբ մեղանջում ենք մեկի դեմ մեր նախանձի կամ Էլ մեր հարաբերություններում ծագած որոշ դժվար խնդիրների պարբռառվ, պետք է անպայման հաշվվենք նրանց հետք: Դաշտ լինելով մենք վերականգնում ենք մեր ջերմ հարաբերությունները մյուսների հետ և վերաբերվում նրանց հետ այնպես, ինչպես նրանք են վերաբերվում մեզ: Ասպծո դեմ մեղանչելիս, մենք խոչընդուռ ենք դում Նրա հետք մեր հարաբերություններում: Պետք է հաշվվենք Ասպծո հետք և վերականգնենք այն սիրո հարաբերությունը, որ Ասպծած կամենում է հասրապել մեզ հետք:

և ճանաչված էր ուրիշների կողմից: Անին մշտապես ավելի հանդարս էր, քան Նանեն և նախընդրում էր կարդալ և սովորել: Նա երեք այնքան ճանաչված չէր, ինչքան Նանեն:

Քարձը դասարաններում Անիի և Նանեի ընկերությունն այլևս այնքան սերվ չէր, որքան նախկինում էր՝ մանկական հասակում: Նանեն ուներ շար ընկերներ և միշտ սպասված հյուր էր բոլոր միջոցառումներին: Նոյնիսկ, երբ Նանեն հրավիրում էր Անիին միանալ իրեն և իր մյուս ընկերներին, Անին մերժում էր: Անին սկսում է մրգածել, որ Նանեն արհամարհում է իրեն և որ նա այլևս չի ցանկանում լինել իր ընկերուին: Որոշ ժամանակ անց, Անին սկսեց շար նախանձել Նանեին:

Ի վերջո, Անիի նախանձն ավելի խորացավ:

«Մենք ինչպիսի՞ լավ ընկերուիիներ ենք եղել, բայց իհմա Նանեն միայն հետքաբրբրված է իր նոր ընկերներով», - մրգածում էր Անին, - «Եթե միայն նա դադարեցներ իր ընկերությունը ուրիշների հետք, մենք նորից լավ ընկերուիիներ կլինեինք»:

Անին սկսեց սուր բաներ հորինել Նանեի մասին: Նա շաբերին ասում էր, որ Նանեն բամբասել է իրենցից, որոնց մասին, իրականում, նա որևէ բան չէր խոսել: Ակզրում Նանեի ընկերները չին հավաքում Անիին, բայց նրանք շուրջով հասկացան, որ Անիի ասածները ճիշտ են: Նանեի ընկերները մեկը մյուսի և վերաբեցից նրա հետք խոսել՝ փոխարենը հավաքալով Անիի ասածներին:

Նանեն չէր համանում, թե ինչո՞ւ իր ընկերներն այլևս չեն խոսում իր հետք: Ահա նա սկսում է հարցնել, թե ինչո՞ւ են նրանք այդպես վարվում: Նանեն պարզեց, որ Անին սպեր է հորինել և վասր բաներ խոսել իր մասին: Երբ Նանեի ընկերները իմացան, որ Անին սուր է խոսել Նանեի մասին, ներողություն խնդրեցին Նանեից և որոշեցին այլևս չվսպահել Անիին: Նանեի ընկերները դադարեցին խոսել Անիի հետք և անզամ Նանեն որոշեց այլևս չվսպահել Անիին: Սպացվեց, որ նա էլ չէր ցանկանում լինել Անիի ընկերուիին:

- ❖ Անիի նախանձը ինչպես պարբռառ դարձավ, որպեսզի կորցնի իր ընկերությունը Նանեի հետք:
- ❖ Ի՞նչ պետք է աներ Անին հաշվվելու համար Նանեի և նրա ընկերների հետք:
- ❖ Եթե Անին խնդրեր ձեր օգնությունը, ի՞նչ խորհուրդ կդայիր նրան:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

- Ինչո՞ւ Կայենք նախանձեց Արելին: Ինչո՞ւ Արելի ընծան ընդունվեց Ասպծո կողմից, իսկ Կայենինը՝ ոչ: Ի՞նչ պեսք է Կայենք մաքուցեր Տիրոջը: Ինչո՞ւ:
- Ի՞նչ պեսք է աներ Կայենք իր եղբորը սպանելու փոխարևն:
- Ի՞նչ է նախանձը: Բերե՛ք օրինակներ նմանագիտ իրավիճակների, որոնք մեզ համար պարճառ են դառնում նախանձելու մեկ ուրիշին: Մեր նախանձի հետքնանքները ինչպիսի՞ն կարող են լինել:
- Բերե՛ք օրինակներ, թե մարդիկ ինչպես կվարվեն նախանձելիս: Նկարագրի՛ր ուրիշներին նախանձող անձանց բառերը, արարքները և ցույց դուր դեմքի արդահայրությունը:
- Ինչպե՞ս կարող է նախանձը խորպակել ընկերությունը:

## ԶԵՐ ՏԵՏՐԱԿՈՒՄ

Մեր ընդունիքները բաղկացած են որոշակի թվով անդամներից, որոնցից յուրաքանչյուրը կիսում է իր եղակի պարզեցները ընդունիքի մյուս անդամների հետ և փարբեր դերակարգություն ունի ընդունիքում: Ձեր փոփրակում կազմեցեք ձեր ընդունիքի յուրաքանչյուր անդամի կագարած բացառիկ ներդրումների ցանկը: Ինչպե՞ս է յուրաքանչյուր անդամի ներդրումն օգնում ամբողջ ընդունիքի բարեկեցությանը: Դաշորդ դասաժամին ներկայացրեք ձեր գրավոր պատրաստած ցանկը:

## ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

**Ընտանիքան այս պարապմունքի համար** անհրաժեշտ է ունենալ մի քանի անարժեք իրեր, ինչպես օրինակ՝ փոքր ճյուղ, պատրուֆած գորգ, լուցկու գործածված դուրս, կուրպված զրիշ կամ մագիստ, թառամած ծաղիկներ, հին զոլպա և այլն: Փաթեթավորե՛ք այս իրերը «նվերների» նման և թաքցրե՛ք:

Նաև ունեցե՛ք Ասպրածաշունչ և ընդունիքի անդամներին հյուրասիրելու համար հաճելի բաներ՝ քաղցրավենիք կամ փոքրիկ նվերներ: Մրանք պեսք է նույնպես թաքուն պահվեն ընդունիքից:

Տավարվե՛ք ընդունիքով: Բաժանե՛ք փաթաթված «նվերները» և խմորե՛ք նրանց բացել: Ներկո հարցուեք նրանց, թե ի՞նչ զգացին ընդունելով այս «նվերները»: Դիարափափեցի՞ն, չփոթվեցի՞ն, որ սպացան արժեքագործ իրեր:

Տիմա բարձրածայն կարդացե՛ք **Ղետական 22: 17-22 համարները**: Ազա քննարկե՛ք հետքեալը.

❖ Մեր սպացած նվերները ոչ օգգակար լին, ոչ է՝ գրավիչ: Տվողն իրականում չէր փակել մեզ իր լավագույնը: Ասպրած ի՞նչ կզար, եթե Իրեն մաքուցեինք մեր ոչ-լավագույնը: Տերն ինչպե՞ս կզար, եթե թերանայինը Իրեն մաքուցել մեր լավագույն ժամանակը և եռանդը կամ թերանանք ապրել այնպես, ինչպես Ինքն է կամ նում, որ մենք ապրենք:

❖ Այս ինչպե՞ս է առնչվում Կայենի և Արելի պատմության հետ, երբ նրանք ընծաներ մաքուցեցին Ասպծուն: (**Ըստ ցանկության, կարելի է այսպես կրկնել պատմությունը կամ կարդալ Ծննդոց 4:1-16 համարները**: Արելն ակնհայրուն իր լավագույնը մաքուցեց Ասպծոն, մինչդեռ Կայենն այդպես չվարվեց):

**Կարդացե՛ք հետևյալ պատմությունը միասին և զրուցե՛ք մեր լավագույնը Աստծուն մատուցելու ձևերի մասին:**

Կարդանք իրաշալի երգիչ էր: Նա երգում էր եկեղեցու երգչախմբում: Նա երգում էր իր փոքրիկ քրոջ

## ԴԱՍ 2

համար, որ քնի: Նրան միշտ խնդրում էին երգել խնջույքների և ընդունելան հավաքույթների ժամանակ:

Վարդանի զարմիկը՝ Տիգրանը, մի քիչ նախանձում էր նրան: Ամեն անգամ, եթք ընդունելան հավաքում էր և Վարդանին հրավիրում էին երգելու, Տիգրանն անցնում էր մեկ ուրիշ սենյակ և լուս փակվում այնպեղ:

Տիգրանը նոյնիսկ սկսեց ապեկ Վարդանին: «Ինչո՞ւ նա պետք է միշտ գրավի բոլորի ուշադրությունը, այն պարզ պարզաբունք, որ լավ ձայն ունի», - մրահող հարցնում էր Տիգրանը:

Ընդունելան խնջույքներն այլևս ուրախություն չեն Տիգրանի համար: Եվ Վարդանի երգից Տիգրանի դեմքն այլայլվում էր: Վարդանի երգը սովորական էր դարձել նաև մյուսների համար:

Վարդանի մյուս զարմուհին՝ Անահիֆը, նոյնպես մի քիչ նախանձում էր նրան: Վարդանը շաբ բախրավոր էր այդքան գեղեցիկ երգել կարողանալու համար: Անահիֆի ձայնային բավարար վագ չեն, բայց այն երբեք չէր նմանվի Վարդանի ձայնին:

Սակայն Անահիֆը լավ էր պարմում պարմություններ: Մարդիկ միշտ լսում էին նրան մեծ ուշադրությամբ: Անահիֆը գրքերի մեջ նոր պարմություններ էր փնտրում և միաժամանակ խնդրում իր բարդիկին ու պապիկին, որ հետաքրքիր հին պարմվածքներ պարմեն իրեն: Նա արագ յուրացնում էր դրանք:

Շուրջով ընդունելան խնջույքներին Անահիֆը պարմում էր նոր պարմվածքներ, իսկ Վարդանը երգում էր: Անահիֆն այլևս չէր նախանձում: Նա հասկացավ, որ Վարդանն ունի մի շնորհ, իսկ ինքը՝ մեկ այլ շնորհ: Անահիֆը շնորհակալ էր Տիգրոջից իրենց պարզեցների համար:

### Քննարկեք հետևյալ հարցերը ձեր ընտանիքի հետ.

- ❖ Ինչպես Անահիֆը բավեց Ասքծուն իր լավագույնը: (*Չարզացմելով Աստծո տված շնորհը կամ տաղանդը*):
- ❖ Ինչպես Տիգրանը թերացավ բարձուն Ասքծուն իր լավագույնը: (*Ուրիշի շնորհին նախանձելը յթույշտրեց իրեն չարզացմելու իր սեփական տաղանդը*):

«Եվր ասացեք ձեր ընդունելան խնջույքներին, որ դուք նվերներ ունեք նրանց համար, որոնք բոլորին կուրախացնեն: Դուք ըերեք և բաժանեք բաղցրավենիքը: Գոհության աղոթք մաքուցեք Ասքծուն Իր շնորհած բազում պարզեցների համար:




## ՆՈՅ.

# ՊԱՅԵԼՈՎ ՈՒԽՏԸ ԱՍՏԾՈ ՀԵՏ



ԻՇԱՐԺԱՆ ՏՈՂ

«Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վախճանը»:  
Մատթեոս 28:20



Ժամանակի հետք մարդիկ բազմացան երկրի վրա, բայց Աստված գոհ չէր նրանց ապրելակերպից: Աստված գոհասավ, որ մարդիկ մեղսագործ են և չարական: Տերը գողաց, որ մարդ է սպեղծել երկրի վրա և որոշեց ջրհեղեղով կործանել նրանց:

Միայն Նոյը և նրա ընդառնիքն էին ապրում

Աստված մանրամասն ցուցումներ դրվեց Նոյին՝ դրապանի ընդհանուր գեսքի, ձեփ, չափերի, ինչպես նաև դրապանի կառուցման համար անհրաժեշտ բոլոր նյութերի վերաբերյալ: Ապա Նոյին ասաց, որ Ինքը ուխտ պիտի կնքի նրա և նրա ընդառնիքի հետ: Նոյը հնագանդորեն կապրարեց այն ամենը, ինչ Աստված պարպիրեց իրեն:

Եթե դրապանի կառուցումն ավարտվեց և այն լցվեց ուրելիքով, Նոյը և նրա ընդառնիքն իրենց հետք դրապանի մեջ վերցրեցին մեկ արու և մեկ էջ ամեն դրապանի կենդանիներից: Այնուհետև, Նոյը փակեց դրապանը, և սկսվեց անձրև դրեղալ քառասուն օր և քառասուն գիշեր: Զուրն այնքան բարձրացավ, որ ծածկեց լեռները: Երկիրը ջրով ծածկված մնաց 150 օր: Բոլոր կենդանի կամները ոչնչացան: Միայն Նոյը, նրա ընդառնիքը և դրապան միաձ կենդանիները փրկվեցին:

Վերջապես Նոյը որոշեց սպուզել, թե ի՞նչ է կապրավում դրապան և աղավնի բաց թողեց: Աղավնին ուրք դնելու դրեւ չգրնելով՝ շուրջով վերադարձավ, քանի որ երկիրը դեռ ծածկված էր ջրով: Ցորեն օր հետո Նոյը նորից աղավնի բաց թողեց: Բայց այս անգամ աղավնին վերադարձավ դրապան՝ կրուցին ձիթենու ճյուղ, իսկ դա նշանակում էր, որ ջրհեղեղի ջրերը քաշվել են երկիրից: Ցորեն օր հետո Նոյը երրորդ անգամ բաց թողեց աղավնուն, որն այլևս չվերադարձավ: Նոյը հասկացավ, որ ջրերը բավական նահանջել են, որովհետև աղավնին իր համար իշխանելու դրեւ էր գործի: Վերջապես, երկիրը կրկին ցամաքեց, և Նոյն իր ընդառնիքով կարողացավ դուրս գալ դրապանից՝ իր հետք դուրս բերելով դրապանում հանգրվանած կենդանիներին:

Աստծո կամքի համաձայն: Աստված ցանկացավ ազաքել Նոյին, նրա կնոջը և նրանց երեք որդիներին՝ իրենց կանանցով և փրկել ջրհեղեղից: Եվ Տերը պարպիրեց Նոյին դրապան կառուցել:

## ԴԱՍ 3

Ապա Նոյը, գոհություն հայդնեց Ասքծուն՝ ջրհեղեղից փրկվելու համար, գոհասնդան պատրաստեց և գոհաբերություն մասուցեց Տիրոջը: Սա հաճելի եղավ Ասքծուն, Ով որոշեց որ այլս երբեք չպիտի անհծի երկիրը կամ կործանի բոլոր կենդանի էակներին: Ասքված հավերժական ուխտ կնքեց Նոյի և նրա ընդունիքի և նրանց ժառանգների, ինչպես նաև կենդանիների հետ: Նա խոսքացավ երբեք չկործանել աշխարհը ջրհեղեղով և ծիածան կապեց երկնքում՝ որպես այս ուխտի նշան:

## ԱՐԵՎՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նոյի գոհաբերությունը  
և Աստծո ուխտը  
նրա հետ

**Ուխտ** - կրտակ, դաշինք, համաձայնություն կամ պայմանագիր երկու կամ ավելի անձերի կամ անհավների խմբի միջև: Ուխտի երկու կողմերն եւ համաձայնվում են իրականացնել որոշակի պարբավորություններ փոխադարձ բարիքի համար: Նոյի հետ կնքած ուխտի դեպքում Ասքված խոսքացավ, որ երբեք չպիտի ջրհեղեղով կործանի երկիրը, իսկ Նոյը և նրա ընդունիքը խոսքացան հավաքարիմ մնալ Ասքծուն:

## ՄՏԱԾԵԼՈՒ ՀԱՍԱՐ

### Դաշինք և ընկերություն

Ընկերությունը ենթադրում է դաշինքի կնքում մեր և մեկ այլ անձի միջև: Ինչպես Ասքված ուխտ կնքեց Նոյի հետ, այդպես և մենք դաշինք ենք կնքում մեր ընկերների հետ: Իհարկե, հազվադեպ ենք թղթի վրա գրանցում մեր ուխտը: Մենք չենք համարում այն որպես իրավական համաձայնագիր և ոչ եւ ամրագրում օրենքի արյաններում: Չենք գոհաբերում կենդանիներ կնքելու համար մեր համաձայնությունը մեր ընկերների հետ և չենք ակնկալում նշան՝ Նոյին հայդնված ծիածանի նման, որ մեր ուխտը ընդունելի է: Այլ մենք ակնկալում ենք որոշակի պարբավորություններ մեր ընկերներից և նրանք եւ մեզանց:

**Մարդեսուի 7:12 և Դուկասու 6:31 համարները** մեզ հիշեցնում են, որ մարդկանց հետ պետք է վարվենք այնպես, ինչպես մենք ենք ցանկանում, որ մարդիկ մեզ հետ վարվեն: Չենք կարող ակնկալել սպանալու ավելին, քան ինքններս պատրաստակամ ենք փայու: Եթե սպում ենք մեր ընկերներին, խարում նրանց կամ գողանում նրանցից, ինչ կարող ենք սպասել ի պարասիան: Նրանք արդյո՞ք կշարունակեն վսպահել մեզ: Եթե մենք բարի չենք պրամադրված նրանց նկարմամբ, իրավունք ունենք արդյոք պահանջել, որ նրանք բարյացակամ լինեն մեր հանդեպ: Եթե ինքներս հնագանդ ընկեր չենք, ինչպես կարող ենք ակնկալել, որ

մեր ընկերները հնագանդ լինեն մեր նկարնամբ: Մենք պեսք է փորձենք լինել այն ընկերը, որի նմանը կցանկանայինք ունենալ:

**Ուշադիք լսեք ձեր ուսուցչի ցուցումները՝ լրացնելու համար հետևյալ առաջադրանքը և քննարկելու ձեր գրածը:**

Ինչ եմ ակնկալում իմ ընկերներից...

Ինչ են իմ ընկերներն ակնկալում ինձանից..

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---



## ԱՎԱՏՔԸ ԳՈՐԾՈՎ

### **Հարցազրույցի հրավիրեք ձեր քահանային**

Եկեղեցու ամենահին խորհրդանիշներից մեկն է փապանը կամ նավը: Եկեղեցին հաճախ նկարագրվում է որպես մի միջոց, որը փրկում է մեզ կյանքի աղնօտիք ծովից՝ ինչպես երգում ենք Ապաշխարության շարականում. «Կենցաղիս ծովը մշտապես ալեկոծում է ինձ»:

Եկեղեցին մեր «փրկության փապանն է» ճիշդ այնպես, ինչպես Ասքծոն պարզվիրանով Նոյի կառուցած փապանը փրկեց նրան և նրա ընդունակության ահավոր ջրհեղեղից:

Մեր փրկությունն սկսվում է մկրպության ջրերից: Երբ մկրպվում ենք, քահանան երեք անգամ ընկղություն է մեզ ջրի մեջ, ասելով «Ասքծոն այս ծառան կամ աղախինը, զալով երեխայությունից դեպի մկրպություն, մկրպվում է Ռոր և Օրդու և Սուրբ Հոգու անունով: Շխուս Քրիստոսի արյամբ գնվելով մեղքերի ծառայությունից՝ ընդունում է Երկնավոր Ռոր որդեգրությունը, դառնալու Քրիստոսին ծառանգակից և Սուրբ Հոգու փաճար»:

Սուրբ Պողոս առաքյալն ասում է, որ ավազանի ջրի մեջ մենք «թաղվում ենք Քրիստոսի հետ» և հարություն առնում Քրիստոսի հետ՝ նոր կյանքով ապրելու համար: Մկրպությամբ մենք դառնում ենք Եկեղեցու անդամ, մուտք ենք գործում փրկության փապան և ուխտ կնքում Ասքծոն հետ՝ խոսքանալով ապրել Ասքծոն կամքի և պարզվիրանների համաձայն: Ասքված դրա փոխարեն խոսքանում է փրկել մեզ չարից և հեռու պահել ամեն գետակի փորձանքներից:

## ԴԱՍ 3

Մեր հոգևոր առաջնորդները, քահանաները և սարկավագները օգնում և խրաբում են մեզ ճիշփ ապրել այս կյանքում: Մեր ծիսական քահանան հապուկ կոչված է օգնելու մեզ պահել ուխտը, որ մենք կապեցինք Ասպծո հետ մկրտվելիս: Որպես նավապետ՝ նա առաջնորդում է մեզ այս կյանքի մրրկածուի ալիքներից՝ պապրասպելով մեզ վայելելու վերջնական մեր խաղաղ նավահանգիստը՝ Ասպծո Արքայությունը:

### Հարցե՛ր ուղե՞ք ձեր քահանային դասի ընթացքում կամ դրանից հետո: *Oրինակ՝*

- ❖ Ինչո՞ւ դարձաք հոգևորական: Ի՞նչ խոսքումներ պվեցիք Ասպծո առաջ քահանայական ձեռնադրության ընթացքում:
- ❖ Եկեղեցին, որպես «փրկության բապան», ինչի՞ց է փրկում մեզ: Եկեղեցին ինչպե՞ս է օգնում մեզ ապրել Ասպծո կամքի համաձայն:
- ❖ Ասպծո և որիշների դեմ մեղանչելիս ի՞նչ պետք է անենք: Ինչպե՞ս կարող ենք լինել ավելի լավ մարդ:



## ՊՐԵՆԹ ՄԵՐ ՇԵՍԱՐԻՏ ԶՐԻՍՈՒԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ

### Հավատարիմ մնալ ուխտին

Քրիստոսի Եկեղեցու հիմնադիրներ են համարվում սուրբ առաքյալները:

Դիսուսի Հարությունից 50 օր հետո, Շոգեգալսպյան օրը ընդունելով Սուրբ Շոգին, Տիրոջ սուրբ առաքյալները քաջարար դուրս եկան Երուսաղեմից և սկսեցին քարոզել Տիրոջ Հարության ավելիսը բոլոր նրանց՝ ովքեր լսում էին իրենց:

Սա այնքան էլ հեշտ գործ չէր առաջին դարում: Չկային թերթեր, հեռախոսներ կամ հեռահաղորդակցության ժամանակակից միջոցներ: Ճամփորդելու միակ միջոցը կամ նավակն էր, կամ ձին, կամ էլ ուղղակի սեփական ուքերը: Բայց առաքյալները վճռակամ էին հոչակելու Փրկչի Սուրբ Հարության ավելիսը աշխարհի չորս ծագերում:

Երկինք համբարձվելուց առաջ Դիսուս Քրիստոս ասաց Իր առաքյալներին. «Գնացե՛ք, ուրեմն, աշակե՛ր դարձեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Նոր և Որդու և Սուրբ Շոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն ամենը, ինչ որ ձեզ պապվիրեցի» (**Մատթեոս 28:19-20ա**): Քրիստոս շար պարզ ասաց, թե ինչ էր ակնկալում առաքյալներից: Նաև հսկակ նշեց, թե Ինքը ինչ պիտի անի, եթե առաքյալները իրականացնեն այս ակնկալությունը՝ խոսքանալով նրանց. «Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (**Մատթեոս 28:20բ**):

Առաքյալները չէին վարանում իրավործելու այս ուխտի իրենց բաժինը: Շոգեգալսպյան օրը, Պետրոսն անմիջապես սկսեց քարոզել Երուսաղեմում հավաքված ամբոխին: Գործք Առաքելոցում կարդում ենք, որ 3000 հոգի քրիստոնյա դարձան միայն այդ մեկ օրում:

Այսպիսով, առաքյալները գրաբանեցին Դիսուս Քրիստոսի Ավելարանը ամրող աշխարհում:

Հակառակ բազում խոչընդուների՝ բանվարկության, նավարեկության, մինչև իսկ մահվան, առաքյալները հավաքարմորեն իրազործեցին Քրիստոսի հրահանգը և Քրիստոս իր հերթին մնաց նրանց հետ իրենց ճամփորդությունների ընթացքում բերելով նրանց մեծ ուրախություն անզամ հալածանքների մեջ:

Դիսու Քրիստոսի 12 առաքյալներից երկուսը՝ Սուրբ Թաղենոսը և Սուրբ Բարդուղիմենոսը, եկան Տայաստան և Ավելարանի լույսը փարածեցին մեր ժողովրդի մեջ, որի շնորհիվ Մեր Եկեղեցին կոչվեց «Առաքելական»՝ հիմնվելով առաքյալների քարոզության վրա: Սուրբ Թաղենոս և Սուրբ Բարդուղիմենոս առաքյալները, այսպիսով, դարձան մեր Սուրբ Եկեղեցու հիմնադիրները և մեր ազգի առաջին լուսավորիչները:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

- Ամփոփելով Նոյի և փապանի պատմությունը: Ինչո՞ւ Ասպված ջրհեղեղ ուղարկեց: Ինչո՞ւ Նա ասաց Նոյին կառուցելու փապանը:
- Ջրհեղեղից հետո Նոյը ինչպես շնորհակալություն հայդնեց Ասպծուն՝ իր և իր ընդունիքը փրկելու համար:
- Ի՞նչ է ուխսը: Ո՞րն եր այն ուխսը, որ Ասպված կնքեց Նոյի և նրա սերունդների հետ:
- Ի՞նչ փեսանելի նշան Ասպված ցույց փուց՝ Իր և Նոյի միջև ուխս կնքելով:
- Ինչո՞ւ ենք Եկեղեցին անվանում «փրկության փապան»: Ի՞նչ է Ասպված ակնկալում մեզանից՝ որպես Եկեղեցու անդամների: Ի՞նչ է Նա խոսքանում մեզ դրա փոխարեն:
- Ինչպես է ընկերությունն ընդունում ուխսը: Զեր կարծիքով՝ ո՞րն է ընկերության ուխսի ամենակարևոր մասը:
- Ովքե՞ր հիմնադրեցին մեր Եկեղեցին:
- Մեր Եկեղեցին ինչո՞ւ է կոչվում Առաքելական:
- Ինչպես կոչվեցին մեր Եկեղեցու հիմնադիր առաքյալները մեր ժողովրդի կյանքում:

## ՉԵՐ ՏԵՏՐԱԿՈՒՄ

Մեր ընդունիքի յուրաքանչյուր անդամ պարտասխանափու է յուրաքանչյուր մյուս անդամի համար: Ծնողներն ունեն որոշակի պարտականություններ իրենց զավակների նկարմամբ, զավակներն ունեն որոշակի պարտականություններ իրենց ծնողների և իրար հանդեպ: Գրե՛ք կարճ ընդունելական ուխս: Նրանում ընդգրկե՛ք ձեր ունեցած սպասումները ձեր ընդունիքի մյուս անդամների, ինչպես նաև նրանց կողմից ձեզ վրա դրված ակնկալությունների վերաբերյալ:

## ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

**Ընտանեկան այս պարապմունքի համար** անհրաժեշտ են 12 քարտ կամ թղթի կորորներ: Յուրաքանչյուր քարտի վրա գրեք հետքեյալ բառերից կամ արդարականացներից մեկը. մետավոր արարածներ, Նոյ, կործանում, նավակ (փապան), յուրաքանչյուր արարած, 40 օր, 40 գիշեր, 150 օր, 7 օր, ձիթենու ճյուղ, զոհասեղան, ծիածան և ուխս:

Անհրաժեշտ է ունենալ նաև Ասպվածաշունչ և հարթ հապակով թղթի փուփ: Ընդունիքի անդամներին ապահովեք թղթերով: Բոլորը կարող են օգտվել մկրապից, բազմազույն ներկերից և մափիփներից: Վերջապես, անհրաժեշտ է մի քանի մետր քարակ թել:

Բարձրաձայն կարդացեք Ծննդոց 6:5 - 9:17

## ԴԱՍ 3

հարվածը: Դրե՛ք 12 քարփերը փուփի մեջ, ծածկե՛ք և լավ խառնեք: Թափի՛ք քարփերը սեղանին կամ հարսակին: Թող երեխան (կամ երեխաները միասին աշխափելով) պարմեն պարմությունը քարփերը ճիշդ հերթականությամբ դնելով և օգտագործեն դրանք՝ նկարագրելու համար Աստվածաշնչի դեպքերը հաջորդականությամբ:

Ասե՛ք ընդանիքին, որ Նոյր պարզապես մեկն էր բազմաթիվ սրբերից, ովքեր հիմնվեցին Ասրծո խոսքման վրա:

Միասին կարդացեք հետևյալ պարմությունը:

Սուրբ Հոփսիմեն մեկն էր այն 37 կույսերից, ովքեր հավաքարիմ մնացին Տիրոջ հետ կնքած խոսքմանը և նահարակվեցին հայոց հողում՝ դառնալով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ամենահարազարդ և սիրված սրբերը:

Հոռմի Դիոկլեփիանոս կայսրը ուզում էր ամուսնանալ իր երկրի գեղեցկագոյն աղջկա հետ: Երկրի փարբեր կողմերն ուղարկված հետքախույզները գրնում են Հոփսիմեն անունով ազնվական օրիորդին՝ Հոռմի քրիստոնեական կուսանցում, որի մայրապետն էր Գայանեն: Երբ կույսերն իմացան կայսեր մովադրությունը, զիշերով գաղփնի հետացան Հոռմից: Երուսաղեմի և Եղեսիայի վրայով հասնելով Վան՝ նրանք հասպարփում են Վարագա լեռան քարայրներում: Այսինք ևս իրենց անապահով զգալով՝ գնում են դեպի հյուսիս և ի վերջո հանգրվանում հայոց մայրաքաղաք Վաղարշապի հնձաններում:

Դիոկլեփիանոս կայսեր թելադրանքով հայոց Տրդար թագավորը հետքախույզների միջոցով հեշտությամբ գրնում է Հոփսիմենին Վաղարշապի շրջակայրում: Տրդար արքան ևս հմայվելով Հոփսիմենի գեղեցկությամբ՝ որոշում է կնության առնել նրան: Հոփսիմենն մերժում է և ընդդիմանում: Ապա կանչում են Գայանեին, որպեսզի համոզի իր սանությունը ընդունելու թագավորի առաջարկը: Գայանեն, ընդհակառակը, քաջակարում է նրան, որ ամուր մնա իր հավաքի մեջ և չփոխանակի երկնային երշանկությունը երկրավոր փառքի և

վայելքի հետ: Գայանեն ծանր չարչարանքների է ներարկվում թագավորի հրահանգին հակառակ խրափ փալու պատճառով և իր երկու ընկերութիներով բանդարկվում արքունիքում: Տրդարը փորձում է բռնի ամուսնանալ Հոփսիմենի հետ, սակայն կույսը հավաքով զորացած գեփին է դրապալում հսկայամարմին արքային և պալափից փախչում իր ընկերութիների մոտ: Մրանից թագավորը չափազանց զայրանում է և դահիճներին ուղարկելով հրամայում սպանել Հոփսիմենին: Զինվորները դաժանաբար սպանում են Քրիստոսի



հրաշալի վկայութուն, ապա նրա մյուս ընկերությանը՝ դաստիարակ Գայանեի գլխավորությամբ:

Սուրբ Շոփիսիմյանց կույսերի հանդեպ մեր ժողովրդի զգացումները այնքան ուժեղ եին, որ հայ մշակույթի համար արվեստի երկու գեղեցկագոյն գործեր սրեղծվեցին: Առաջինը Սուրբ Շոփիսիմյան նվիրված հոյակերպ տաճարն է, որը հայ ճարարարապետության գլուխգործոցն է և նրա լավագոյն արդահայքությունը: Երկրորդը՝ ի պատիվ կույսերի գրված «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» գեղեցկահյուս շարականն է: Այս երկուսի հեղինակն է Կոմիլբա Կաթողիկոսը /615-628 թթ./:

«Ներաբրիք է, որ այս շարականը գրված է հայոց այրութենի տառերի կարգով և բանակով, որով և բաղկացած է 36 տոներից: (Եվ, Օ, Ֆ տառերը, ինչպես զիգենք, հայոց այրութեն մուգը են գործել 12-րդ դարից հետո): Ահա շարականի առաջին գրունը:

«Անձեր նվիրված Քրիստոսի սիրոյն, երկնավոր նահապակներ և իմաստուն կույսեր. ձեր պարանքից ցնծալով դրույթ կատարում է Մայր Սիոնը (Եկեղին)՝ իր զավակներով միասին»:

**Հետևյալ հարցերը քննարկեք ձեր ընտանիքի հետ.**

❖ Ո՞վ եր Շոփիսիմյան և ինչո՞ւ եկավ Տայասպան: (Աս հռոմեացի քրիստոնյա կոյս եր, որ հեթանոս կայսեր հալածանքներից ազարվելու համար իր ընկերությանը հետ փախավ Շոտին և ապասպանեց Վաղարշապատում):

❖ Ինչո՞ւ նա մերժեց արքաների կինը դառնալու առաջարկը: (Իբրև ճշմարիք քրիս-

տոնյա՝ նա ուսուր էր կնքել Քրիստոսի հետ ապրելու սրբակնեցաղ կյանքով և նույնիսկ գերադասեց չարաչար դանաշանքներ կրելով ընդունել նահապակության լուսն պատկը, քան թե կրապաշտ թագավորների ուվել թագը):

❖ Շոփիսիմյանց կույսերի սուրբ նահապակությունը հոգևոր ինչ նպաստ բերեց հայ ժողովրդին: (Արանց նահապակությամբ ամրապնդվեց քրիստոնեությունը Տայասպանում և ամիսներ անց՝ 301թ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Տայրապետի ձևորով մկրտվեց հայ ժողովուրդը՝ Տայոց արքայի գլխավորությամբ: Տայոց պետությունն առաջինն աշխարհում ընդունեց քրիստոնեությունը՝ իբրև պետական կրոն):

Ընդունիքի անդամներից յուրաքանչյուրին խնդրեք, որ ցանկացած մի խոսքում պահի Ասքծոն հետ: Թողթի կրորները կրորեք ծիածանաձև: Թողթ ընդունիքի յուրաքանչյուր անդամ իր խոսքումը գրի ամեն մի կրորի վրա և ապա ծիածանի գոյներով թեթև ներկի դրանք: Փակցեք ծիածանը թելի երկարությամբ և կահւեք այն ձեր դրանք մի հարմար դեղ:

Նաև ընդունիքով խոսքում դպիք Ասքծոն, որ միասին պիտի ուխտի զնաք սուրբ կույսերին նվիրված եկեղեցիները, մոմ վառեք և կույսերի մաքուններում միասին աղոթեք Ասքծոն՝ ձեր ընդունիքի պահպանության համար խնդրելով Սուրբ Շոփիսիմյան, Սուրբ Գայանեի և մյուս սուրբ կույսերի բարեխոսությունը:

## ԱԲՐԱՀԱՄ. ԱՊԱՎԻՆԵԼՈՎ ՏԻՐՈԶԸ



ԻՇԱՐԺԱՆ ՏՈՂ

**«Ամրող սրտով հույսդ դիր Աստծո վրա և  
մի՛ հպարտացիր քո իմաստությամբ:  
Քո բոլոր ճանապարհներին ճանաչիր նրան,  
որպեսզի նա ուղղի քո ճանապարհները և ուղքով չսայթաքի»:  
Առակներ 3: 5-6**

Նոյի և իր ընդանիքի՝ ջրհեղեղից փրկվելուց  
շաբ փարիներ իւսուն, Աքրահամը և իր կինը՝  
Սառան, իրենց փնից՝ Ուր քաղաքից, զնում են  
Ասպծո կողմից նրանց խոսքացված երկիրը:  
Նրանք զավակ չտոնեին, բայց Ասպված օրինեց  
նրանց և զավակ փվեց՝ Խսահակին, իրենց  
առաջացած փարիքում: Եվ քանի դեռ նրանք  
հավաքարիմ էին Ասպծուն, շարունակում էին  
Տիրոջ օրինություններով և փված խոսքումներով  
ապրել:

Մի օր Ասպված փորձելով Աքրահամի  
հավաքարմությունը՝ պազմիրեց նրան անհնարին  
և նույնիսկ դաժան թվացող մի զործ անել, այն է՝  
զոհաբերել իր իսկ մինուճար որդուն՝ Խսահակին:  
Ասպված ասաց Աքրահամին, որ վերցնի  
Խսահակին, դանի Մորիա լեռ և իբրև ողջակեզ  
զոհաբերի: Կարող ենք միայն երևակայել, թե  
որքան դժվար էր այն Աքրահամի համար: Նա շաբ  
էր սիրում իր որդուն, բայց սիրում էր նաև Ասպծուն  
և ապավինում Նրան: Եվ նա՝ Աքրահամը, կադա-  
րեց այն, ինչ Ասպված պավոիրել էր: Առավույյան  
շուկ արթնացավ, բեռը լծեց էշին, վերցրեց երկու  
ծառաներ և որոշ վառեկափայտ և կանչեց Խս-  
ահակին՝ միանալու իրենց: Նրանք ճամփորդեցին  
երեք օր և Աքրահամը հեռվից նկարեց այն լեռը, որի  
վրա պիտի զոհաբերեր Խսահակին: Նա հրամայեց  
ծառաներին սպասել ներքնում, մինչև ինքը և  
Խսահակը կբարձրանան այնքեղ երկրպագելու  
Ասպծուն: Խսահակը դանում էր փայտը,

Աքրահամը՝ կրակը և դանակը:

Միասին բարձրանալիս Խսահակը հարցնում է՝



Վրահամին.

- Հայր, ահա փայտը, կրակը և դանակը, բայց ո՞ւր է զատնուկը, որին պիտի գոհարերենք ողջակիզելու համար:

- Ասպված կիոզա իր ողջակիզելու ոչխարի մասին, որդյա՞կ, - պարախանեց Վրահամը, բայլելը շարունակելով:

Եթք գեղ հասան, Վրահամը գոհասեղան կառուցեց, փայտը դրեց վրան և Խսահակին կապեց փայտի վրա: Վրահամը հանեց դանակը և Խսահակին գոհարերելու պահին հրեշփակը երկնքից ձայն դրվեց նրան.

- Արքահա՞մ, Արքահա՞մ, ձեռք մի՛ գուր պարանուն, նրան որևէ վնաս մի՛ պարճառիր, որովհենքն այժմ համոզվեցի, որ դու երկյուղ ունես Ասպծո նկարմամբ և ինձ համար չես խնայի քո որդուն, - ասաց հրեշփակը:

Այնուհետև, Վրահամը վերև նայեց և գեսավ

մացառուր թվի մեջ եղջյուրներից կախված մի խոյ: Ազափելով իր որդուն՝ Խսահակին, Վրահամը խոյին ողջակեզ մարտուցեց Ասպծոն՝ իր կատուցած գոհասեղանի վրա: Եվ նա կոչեց այդ գեղը «Տերը դրեսավ»:

Ապա հրեշփակը կրկին կանչեց Վրահամին և ասաց նրան, որ Ասպծոն հնազանդվելու շնորհիվ պիտի օրինություն գտնի: Ասպված նրա սերունդների թիվը պիտի բազմապարկի երկնքի ասքղերի և ծովի ավագի չափ: Նաև Վրահամի ժառանգները պիտի փրեն իրենց թշնամիների երկրին և նրանցով երկրի ազգերը պիտի օրինվեն: Այսպիսով, Ասպված խոսպացավ Վրահամին շար ժառանգներ, երկիր և օրինություն: Հայր և որդի վերադարձան այնքետ, որ ծառաները սպասում են, և միասին զնացին գույն՝ Բերսարե, որ թարգմանվում է Երդման ջրհոր:

## ՄԱՍԻՆ ՏԱԾԵԼՈՒ ՀԱՍՎՐ

### *Տիպարները մեր կյանքում*

**Տիպարը** մի անձ է, ով ներշնչում է մեկ ուրիշին ապրելու իր կյանքը:

Վրահամը մեզ համար լավ փիպար է: Նա կապարելապես վսպահում էր Ասպծոն, այն ասպիճան, որ պարրասպ էր ամեն գնով կապարելու Նրա կամքը: Բայց Վրահամը մեզանից շար դարեր առաջ է ապրել և միանգամայն մեզանից դարբեր մշակութային հասարակության մեջ և ժամանակակից աշխարհում գուցե դժվար կլիներ նրան դրական դիպար համարել:

Ճափերս ակնածում ենք մեր շրջապատի այն մարդկանցից, ովքեր նշանավոր են և դրական կերպար կարող են հանդիսանալ մեզ համար: Եթքեմն մեր երևակայած դիպարները բարի են, առարկածեռն, ազնիվ, արդար և սիրալիր մարդկանց նկարմամբ: Նրական դիպարները ճանաչվում են բարի ու ազնիվ գործեր անելիս: Նրանք ջանաւեր են իրենց աշխարհանքում, օգնության ձեռք են մնկնում կարիքավորներին, սեր և հարզանք են դառում իրենց ընկերների հանդեպ, եվլուցի են զնում և ադրդում առ Ասպված: Նրանք հնարավոր է հերոսություն չեն գործում. միզուցե արդարինից էլ գրավիչ չեն կամ հարուստ: Այնուամենայնիվ, դիպելով նրանց և ճանաչելով նրանց առաքինությունները և բարի հարկանիշներ՝ փորձում ենք նմանվել նրանց, որպեսզի դառնանք ավելի լավ մարդ և նոյնիսկ ավելի հավաքով քրիստոնյաներ:

Ոչ բոլոր դիպարներն են դրական: Կան մարդիկ, ում կարող ենք կոչել բացասական կերպարներ: Նրանք սպահուսներն են, խարեւաները և զողերը իրենց կենսակերպով: Նրանք ժլապ, ազահ կամ խարդախ մարդիկ են: Նրանք կարող են մյուսներին վար վերաբերվել, թերևս քննադարելով նրանց կամ բամբասելով նրանցից, կամ գուցե նոյնիսկ մարմնական վնաս պարճառել նրանց: Որոշ

## ԴԱՍ 4

բացասական կերպարներ կարող են լինել բավական հանրահայք, ճանաչված կամ հարուստ՝ մարմնամարզիկներ, երաժշգության կամ կինոյի ասքղեր կամ գործարարներ, և նրանց օրինակը հնարավոր է հրապորի մեզ՝ լինելու նրանց նման «բախտավոր»: Մեր կյանքում նմանվելով բացասական կերպարներին՝ չենք օգնում ինքներս մեզ դառնալ ավելի լավ մարդ կամ խորացնել մեր հավաքը: Փաստորեն հակառակն է սփացվում:

Լավագույն փիպարները նրանք չեն, ովքեր դրամ ունեն, հրչակ կամ հանրաճանաչություն: Մինչ այս դեսակ բաները երջանկարեր կարող են թվալ, սակայն դրանք վեսական չեն: Անձը կարող է լինել հարուստ կամ հայքնի այսօր, իսկ վաղը՝ ճաշակել աղբագություն և արհամարհանք: Դրական փիպարները երբեք չեն փորձում պապավորություն թողնել մյուսների վրա, փոխարենը՝ նրանք ջանում են ցոյց տալ իրենց սերը Ասպծո հանդեպ՝ մյուսների նկարմամբ սեր ցուցաբերելով: Այսպես վարվելով նրանք օրինակ են դառնում մեզ համար և հիշեցնում լինել այնպիսին, ինչպիսին Ասպված սրեղծել է մեզ, և ուզում է, որ ապրենք:

## ԱՐԵՎՈՐ ՅԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ողջակեզ** - զոհաբերության այն դեսակն է, երբ ընծան ամրողությամբ մարուցվում է Ասպծուն: Դին Կրակարանում Ասպված պապվիրել է Իր ժողովրդին, որ զոհաբերեն կենդանիներ, ցորեն կամ ձեր՝ շնորհակալության, փառաբանության, բավության և մաքրագործման համար: Ողջակիզումը արու զառան, խոյի, այծի, ցիի, աղավնու կամ դարբակի զոհաբերությունն է, որի ընթացքում զոհաբերվող կենդանուն մորթում են և այրում հափուկ զոհասեղանի վրա:

**Տիպար** - այն անհապն է, ումից ներշնչվում է մեկը՝ իր կյանքն ապրելու նրա նման և նա դառնում է նրա կյանքի օրինակը և չափանիշը: Դիսու Քրիստոս զերագույն փիպարն է քրիստոնյաներին համար:

### Ի՞նչպե՞ս պետք է վարվեր Արամը

Արամը սիրում էր հաճախել եկեղեցական արարողություններին և երգել դպրաց դասում (երգչախմբում): Մանկությունից ի վեր նա միշտ հիանում էր իր խմբավարով, ով հայքնի էր բոլորի հանդեպ իր բարյացականությամբ, ինչպես նաև Եկեղեցուն և սրբազն արարողություններին իր նվիրվածությամբ:

«Երբ մեծանամ, հուսով եմ, որ կարող եմ ծառայել Ասպծուն նոյն սիրով և ուրախությամբ», - հաճախ մրածում էր Արամը, երբ նայում էր խմբավարին և լսում նրա ամեն խոսքը:

Բայց երբ մեծացավ, Արամը փոխեց իր երաժշգուական հետաքրքրությունը և սկսեց դպրավել ոռք երաժշգությամբ: Նա դեսավ, թե ինչպես են ոռքի ասքղերը հարուստ և ճանաչված դառնում: Մոռանալով խմբավարի թողած օրինակը՝ նա սկսեց վարվել և հագնվել ոռք երգչի նման՝ մինչև իմացավ, որ իր սիրած ոռք-ասքղը մահացել է թմրադեղի մեծաքանակ ազդեցությունից:

**Ի՞նչ խորհուրդ կտայիք Արամին անել՝ այս իրավիճակից դուրս գալու համար:**



## Անարյուն զոհարերություն

Ասպարած կրթեք չի պահանջում մեզ անել այն, ինչ հնքը չէր անի:

Կարող է փարօրինակ թվայ, որ Ասպարած պատվիրեց Աբրահամին զոհարերել իր որդուն՝ Իսահակին: Բայց սա համարվում է երբեմ կարարված մեծագույն զոհարերությունը: Նոր Կրտակարամում դրևանում ենք Հիսուս Քրիստոսին՝ Ասպծո Միածին Որդուն, որ փախս է իր կյանքը որպես զոհարերություն՝ ազարելով մեզ մեղքից և մահվանից: Քրիստոս դառնում է նոր, կենդանի և կարարյալ զոհարերություն կամ պարարազ, ով թափեց Իր արյունը «աշխարհի փրկության համար»: Մենք հավաքում ենք, որ Հիսուսի մահվամբ և հարությամբ հավիտենական կյանքի խոսքումը պիտի շնորհվի մեզ Ասպծո Աբրահամի մեջ, եթե մենք Աբրահամի և մյուս սրբերի նման մեր հույսը դնենք Տիրոջ վրա:

Ի դարձներություն Հին Կրտակարամի ողջակեակի՝ Սուրբ և Անմահ Պատարազը անարյուն զոհարերություն է, քանի որ ճաշակում ենք Հիսուս Քրիստոսի Մարմինը և Վրյունը նվիրագործված հացի և զինու դեսպով՝ ինչպես Տերն Ինքը հասպատեց վերջին ընթրիքի ժամանակ և Իր առաքյալների հետ կիսելով՝ բաշխեց հացը և զինին Իր մահվան նախօրեկին: Խաչի վրա Քրիստոսի թափած արյունը «կնքում է» նոր և հավիտենական ուխտը Ասպծո և Իր Ժողովրդի միջև, մի ուխտ, որը պարզեցում է մեզ հավիտենական կյանքը:

**Ուշադի՞ր լսեք ձեր ուսուցիմ, երբ ձեզ հանձնարարի կարդալ և քննարկել Սուրբ զորի հետևյալ հատվածները.**

- ❖ Ա Կորնթացիներին 11:23-26
- ❖ Փիլիպեցիներին 2:5-8
- ❖ Երրայեցիներին 9:1



## Կոչված լինել սրբության

Տերը չկամեցավ, որպեսզի Դավթի կառուցի Տաճարը՝ զոհեր մաքուցելու համար: Սողոմոնը զոհեր մաքուցեց և բարձունքների վրա խոնկ ծինեց, որը նախապես շինված էր կուռքերի համար: Վյուհանդերձ, Տերը գետավ, որ Սողոմոնը իր հայր Դավթի նման սիրում է Ասրծուն և փափազում հավաքարիմ մնալ Օրենքին: Դրա համար էլ Տերը երազում երևաց նրան: Նա Սողոմոնին խոսքացավ դավա այն ամենը, ինչ որ նա խոնդի:

Սողոմոնը կարող էր հարսություն, մեծ թագավորություն կամ թշնամիների դեմ հաղթանակներ խնդրել: Փոխարենը՝ նա խնդրեց Տիրոջից իմաստություն և խելամփություն ժողովրդին արդար դադելու համար: Տերը զոհունակությամբ կարարեց նրա խնդրանքը: Եվ, քանի որ նա արժանի պարզ էր խնդրել, Տերը դիմեց նրան նաև այն, ինչ նա չէր խնդրել՝ հարսություն և փառք, որն այդ ժամանակի որևէ թագավոր կերպեր ունենալ:


Սողոմոնի պարզեց անմիջապես ծառայեց բարի գործի: Երկու կանայք մովեցան Սողոմոնին՝ երկուսն էլ ներկայանալով իբրև միևնույն երեխայի մայր: Վռաջին կինն ասաց, որ առավույյան արթնանալիս մի մեռած երեխա զբավ իր կողքին: Երեխան նրա սեփականը չէր: Նա ասաց, որ երկրորդ կինը, ում երեխան մահացել է, փոխել է կենդանի երեխային մահացածի հետ: Սողոմոնը գիտեր, որ միայն կանանցից մեկը կարող է ապրող

Երեխայի իրական մայրը լինել՝ մինչդեռ երկուս էլ պնդում էին իրենց մայրությունը:

Իր իմաստությամբ Սողոմոնն առաջարկեց, որ մանկանք պետք է մեջքեղից կհսեն, որպեսզի յուրաքանչյուրն ունենա երեխայի կեսը: Եթե սուսերակիրը քիչ էր մնացել երկու կես աներ մանկանը, առաջին կինը լաց եղավ, որ երեխան պետք է ապրի և փրփի երկրորդ կնոջը: Իսկ երկրորդ կինն ասաց, որ թող մանուկը ոչ իրենը լինի, ոչ էլ նրանը, այլ թող մեջքեղից կիսվի: Սողոմոնն անմիջապես կրահեց և ցոյց վայեց, որ այն կինը, ով ցանկանում էր երեխային փալ անձանոթին, որպեսզի կենդանի մնար, նա է մանկան իսկական մայրը: Ժողովուրդը գարմացած մնաց՝ Սողոմոնի արդար դարսավանք փեսնելով:

Իր իմաստության շնորհիվ Սողոմոնի արքայությունը բարզավաճեց և ընդարձակվեց: Նա ուներ անթիվ ախտոներ, առևտրական նավարորմ, ինչպես նաև ընդիր շինանյութից կառուցված պալատ: Բայց նրա մեծագոյն իրազործումներից մեկը եղավ Տիրոջ Տաճարի կառուցումը: Ինչպես Սողոմոնի մյուս արածները՝ նա ծրագրեր կազմեց և փաճարի կառուցման համար հայթայթեց ամենաընդիր շինանյութերը, որոնց նմանը չէր գտնվում: Տաճարի ներքին պաքերը կահավորեց մայրի փայտով, որը միայն թերվում էր Լիբանանից: Սողոմոնը ուսկով պաքեց Տաճարի Սրբությունների սրբությունը, ուր պահպամ էր Ուխտի փապանակը՝ Տասնարանյա պատվիրաններով, սրբարանի բոլոր պատերը, խորանը և երկու կողմներում թերովքներ կանգնեցրեց:

Եթե Տաճարի շինարարությունն ավարտվեց, Սողոմոնը հավաքեց ժողովրդին և ընծայեց այն Տիրոջ՝ Նրան, Ով ժողովրդին դուրս թերեւ Եզիպտոսից և Ով Դավթին թագավոր դարձրեց: Ամբողջ ժողովրդի մեջ Սողոմոնն աղոթեց, որ չկա Տեր Աստծո նմանը, Ով պահում է Իր սիրո ուխտը Իրեն հավաքարիմ ժողովրդի հետ: Մասնից շաբ չանցած Տերը երազում հայդնվեց Սողոմոնին՝ օրինեց և զգուշացրեց, որ եթե նա և իր սերունդները



ապրեն Տիրոջ պատվիրանների հանդեպ հավաքով և հնազանդությամբ, հավիպյան զահին պիտի բազմեն: Եվ եթե չհնազանդվեն և եվ կանգնեն Տիրոջը հավաքարիմ լինելուց, Խորայելը կջնջվի երկրի երևսից և Տաճարը կբանդվի:



#### Իմաստուն խորհուրդ

Եթե Սաղմոսագիրքը պարունակում է շաբ երգեր, որոնցով փառարանում ենք Ասքծուն, Առակների զիրքը բովանդակում է հարյուրավոր գողենը, որոնք մեզ փալիս են իմաստուն խորհուրդներ մեր առօրյա կյանքի համար: Օրինակ՝ **Առակներ 26:4-ում** գրված է. «Անզգամին մի՛ պարասիանիր ըստ նրա անզգամության, որ չինի թե նմանվես նրան»: **Առակներ 29:23-ում** կարդում ենք. «Ամբարդավանությունը պիտի նվասպացնի մարդուն, բայց Տերը խոնարհներին պիտի արժանացնի փառքի»:

**Ուշադիր լսեք ձեր ուսուցչի տված հանձնարարությունները, երբ կազմակերպի ձեզ հորինելու մի շարք առակներ մեր ներկա ժամանակի համար:**

#### Ես կգնամ Տիրոջ տուն

**Գ Թագավորություններ** 6-8 գլուխներում գտնում ենք Երուսաղեմի Տաճարի շինության մանրանասն փվյալները, ինչպես նաև ներքին հարդարանքի և առարկաների նկարագրությունը:

Տաճարի շինության մեջ, ինչպես նկարագրված է Գ Թագավորությունների գրքում, գտնում ենք քերովեների պարկերներ, ներքին սրբարան՝ Սրբությունների սրբությունը, որպեսդ դրվագ էր Ուխսի դապանակը, խորանը, խնկարկության անոթները, կանթեղների աշբանակները և մի շարք այլ պարագաներ, որոնք մեզ բավական հիշեցնում են այսօրվա մեր եկեղեցիների խորանները:

Զեր ուսուցիչը կպայմանավորվի քահանայի հետ՝ ձեզ եկեղեցի դամարի: «Պարույրի» ընթացքում նա ձեզ ցոյց կփա, թե այսօրվա մեր եկեղեցիների հապակի զծագիրը որքան նման է Սողոմոնի Տաճարի հապակագծին:

Մի՛ ամաչեք հարցեք դրա քահանային՝ պարույրը վարելիս և բացաբրելիս: Միզուցն ցանկանաք նշումներ կապարել թղթի վրա և նույնիսկ լուսանկարվել «պարույրի» ընթացքում:

**Ուշադիր լսեք ձեր ուսուցչի տված հանձնարարությունները՝ զեկուցում կամ ցուցադրում պատրաստելու համար, ցոյց տալով մյուսներին, թե ինչ սովորեցիք եկեղեցում՝ ձեր «պտույտի» ընթացքում:**

#### ԱՎԱՏՁԸ ՏԱԾԵԼՈՒ ՀԱՍՏԱՐ

#### Գիտելիք, ընկալում և իմաստություն. ո՞րն է տարրերությունը

Սողոմոնի պարմության կենդրունական գաղափարը իմաստությունն է: Բայց ո՞րն է իրականում **իմաստությունը**: Ինչպես է այն փարբերակվում գիտելիքից կամ **ընկալումից**:

Գիտելիքն այն է, ինչ գիտենք ինչ-որ առարկայի մասին: Օրինակ՝ մենք գիտենք սիրո մասին,

որովհեքին մեզ պատմել են: Մենք կսմ ապրել ենք սերը, կսմ էլ հավաքում ենք, որ այն իրապես գոյություն ունի:

**Ընկալում** օգնում է մեզ սովորել ավելին, քան գիրքներ՝ ուսումնասիրելով և զննելով մեր գրամադրության բակ եղած փեղեկությունները և փորձելով վերլուծել, թե ինչո՞ւ իրերն ու առարկաները այնպիսին են, ինչպիսին որ կան: Ընկալումն այն է, եթե փորձում ենք կապեր գրնել և նայել որևէ իրի կամ առարկայի խորքը: Օրինակ՝ որո՞նք են սիրո և սիրողի հավկությունները: Որքե՞ն է սերը փորձվում: Որքե՞ն է սերը բացակայում: Անհրաժեշտ է փեսնել սերը, որպեսզի իմանալ, որ այն գոյություն ունի:

**Իմաստությունն** այն է, ինչ ընկալում ենք, գիրքներ և գործադրում ենք մեր առօրյա կյանքում: Որոշ առումով, իմաստությունն Ասպծուց մեզ բրվածի արդահայտությունն է: Եթե լավ ենք օգտագործում ճշմարդության վերաբերյալ մեր գիրքելիքները, որ Ասպված հայտնել է մեզ, և այդ գիրքելիքը հասկանալով կիրառում ամենօրյա մեր կյանքում, մենք իմաստություն ենք հայտնագործում:

**Նկատի՝ առեք հետևյալ իրավիճակները: Մտածեք, թե ինչ գիտեք, ինչ եք հասկանում և ինչպես իմաստուն կվարվեիք յուրաքանչյուր իրավիճակում: Հետևեք առաջին իրավիճակի օրինակին:**

Իրավիճակ	Գիտեմ, որ...	Հասկանում եմ, որ...	Իմաստուն պատասխանն է...
1. Ձեր ընկերը իրեր է գողացել և ուզում է թաքցնել դրանք ձեր բանը	Գողանալը ճիշդ չէ, որովհեքին բիրանում եմ սեփականության, որն ինձ չի պարկանում	Եթե թաքցնեմ ընկերոջս գողացած իրերը, կլինեմ պարզապես նրան հանցալից	Ընկերոջս ասել, որ չեմ օգնելու իրեն և, իբրև ընկեր, ցավում եմ նրա գողության համար
2. Ֆուրբոյի խաղին խարդախություն են արել, որի պարբառով մյուս թիմը պարզվել է, ինչը մրցավարը չի նկագել			
3. Քեզ գործ են առաջարկել, սակայն պահանջում են աշխատել ամեն կիրակի օրվա առավողյան			
4. Լսում ես, որ մեկը սարսափելի քամբասանք է բարածում մեկ որիշի մասին, որը գիրես, որ ճիշդ չէ			
5. Մնացել ես ընկերոջ բանը և քեզ իրավիրում են զնալ մի բեղ, ուր զնալը ծնողներդ խսդորեն արգելել են			

## ԴԱՍ 12

### ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

- Ի՞նչ արեցին Նաթանը և Սաղոկը:
- Ի՞նչ չկարողացավ անել Դավիթն իր կյանքի ընթացքում:
- Տերը Սողոմոնին ի՞նչ խնդրել դրեց:
- Սողոմոնն ին՛չ խնդրեց և ինչո՞ւ էր այն զարմանալի:
- Ո՞րն էր երկու կանանց գանգապը: Սողոմոնն ինչպես լուծեց խնդիրը: Ինչպես է այս դեպքը ցոյց դաստիարակությունը:
- Նկարագրե՛ք Սողոմոնի թագավորության ունեցվածքը:
- Նկարագրե՛ք Տիրոջ Տաճարը:
- Ի՞նչ էր պահպում Տիրոջ Տաճարում:
- Ո՞րն էր Տիրոջ խոսկումը Սողոմոնին:

### ԶԵՐ ՏԵՏՐԱԿՈՒՄ

Վստահաբար, բոլորս ճանաչում ենք մարդկանց, ովքեր շափ իմաստուն են: Եվ նրանց որոշումները թվում են, թե միշտ օգտակար են մարդկանց կամ կարող են վարդարագույն վիճակը փոխել լավագույնի: Իսկ եթե հետևենք նրանց խորհուրդներին, ապա երջանիկ ավարտը ապահովված կլինի:

Նարզարույց վարեք ձեզ ծանոթ իմաստուն մեկի հետ: Նարզերե՛ք նրան, թե ինչպես է որոշումներ կայացնում, ինչպես է կշռադարձում դրվագ իրավիճակի թեր և դեմ կողմերը, և թե ինչպես է նա իրեն պահում դժվարությունների հանդիպելիս: Ի՞նչ խորհուրդ կրա ուրիշներին: Գրի՛ առեք ձեր հայդարագործումները դրեպրակում:

### ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

**ԸՆՏԱՆԻԿԱՅԻ ԱՅՍ ԱՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԻԱՄԱՐ**  
անհրաժեշտ է ունենալ Ասրբածաշոնչ, մարդկաներ և թուղթ: Նաև պեսք է գրել հետևյալ համարները Առակների գրքից՝ թղթի երկու առանձին էջերի վրա.  
**Առակներ 10:1ա, 10:14ա, 13:20, 14:16, 18:4, 23:15, 26:12, 28:26:**

Մեծ թղթի վրա արդագրե՛ք հետևյալ հայդարագործությունը՝ ամբողջությամբ՝ ըստ սպորտի բերված կարգի: Օգդագործե՛ք մեծ դրամեր, որպեսզի հարվածները դյուրիխն ընթերցվեն:

- Իսկ անզգամն ինքնավսրահ ընկերանում է անօրենի հետ:
- Բայց իմաստությամբ վարվողը կփրկվի:
- Անմիտ որդին դրվագություն է մոր համար:
- Բայց անզգամից ավելի շափ բան կարելի է հուսալ, բան նրանից:
- Բայց անզգամներին ընկերակցողը թաքուն պիտի չմնա:

- Բիսող զետք է և կյանքի աղբյուր:
- Բայց հանդուզն մարդու բերանը մոր է կործանման:
- Ապա կուրախացնես և իմ սիրպը:

Ընդունակություն հավաքելուց հետո վերանայեք Սողոմոնի պարագաները և քննարկեք, թե ինչո՞ւ նա իմաստուն մարդ համարվեց: (**Նա կանչվեց կայացնելու շափ որոշումներ և կարգավորելու շափ վեճեր:** Սրանք ունեին բարոյական և հոգևոր, ինչպես նաև իրավական չափանիշներ: Սողոմոնն այս որոշումները կայացնում եր ուշադիր և իմաստուն կերպով):

Ընդունակություն հայդարագործությունը, որ Տիգրան Կառավարանը շափ ասելիք ունի իմաստության մասին: Այս գրքի որոշ ասույթներ գրվել են հենց Սողոմոնի կողմից: Բացե՛ք Ասրբածաշոնչ Առակների գիրքը: Նրանում պարունակվող ասույթներից շափերը կարելի է

բաժանել երկու մասի: Այդ մասերն անվանում ենք «ա» կամ «բ»: Օրինակ՝ **Առակների 1:8** բողի ա մասում գրված է. «Լսի՛ր, որդյա՞կ, հորդ խրապը», մինչդեռ բողի բ մասում՝ «և մի՛ մերժիր մորդ պարվիրանը»:

Առակների իմաստուն բողերն առավել ուսումնասիրելու համար ընդանիքը բաժանեք երկու խմբի: Յուրաքանչյուր խմբի պվեր բողերի համարների պարմենը, Աստվածաշունչ, մատիւր և թուղթ: Գրի առնված հարվածներով մեծ թուղթը դուեր բոլորին փեսանելի հարմար փեղում: Խմբերին ասեք, որ «ա» բողի համարները վերաբերում են բողի առաջին կեսին, իսկ զրի առնված հարվածները լրացնում են այդ բողերը «բ» մասով: Նայե՛ք, թե որ խումբն առաջինը կզբնի և իրար կմիացնի համապատասխանող մասերը և կզրի ամբողջական առակները: Այսուհետեւ, միասին կարդացեք առակները: (**Այս պարապահանները. 10:1-ը՝ 3-ին, 10:14-ը՝ 7-ին, 13:20-ը՝ 5-ին, 14:16-ը՝ 1-ին, 18:4-ը՝ 6-ին, 23:15-ը՝ 8-ին, 26:12-ը՝ 4-ին և 28:26-ը՝ 2-ին):**

Ահավասիկ ութ առակներն ամբողջությամբ՝ ըստ համարակալված հարվածների հերթականության.

1. Իմաստուն որդին ուրախացնում է հորը, անմիտ որդին փրփրմություն է մոր համար:
2. Իմաստունները իմաստություն են հավաքում, բայց հանդուզն մարդու քերանը մովք է կործանման:
3. Իմաստուններին ընկերակցողը իմաստուն կլինի, բայց անզգամներին ընկերակցողը թաքուն պիտի չմնա:
4. Իմաստունը զարհուրելով՝ իր ճամփան շնորհում է չարից, իսկ անզգամն ինքնավարան ընկերանում է անօրենի հետ:
5. Խորհուրդը խոր ջուր է մարդու սրբում, բխող զեր է և կյանքի աղբյուր:
6. Որդյա՞կ, եթե քո սիրվն իմաստուն լինի, ապա կուրախացնես և իմ սիրվը:
7. Մարդ եմ փեսել, որ պարծեցել է, թե ինքն իմաստուն է, բայց անզգամից ավելի շատ բան կարելի է հուսալ, բան նրանից:



8. Ով հույսը դնում է իր սրբի հանդգնության վրա, նա անզգամ է, բայց իմաստությամբ վարվող կփրկվի:

Վերջում կարդացե՛ք **Առակներ 30:24-28-ը** միասին: Այս բողերը հետաքրքիր են և միաժամանակ միտք արթնացնող:

Գիրքեի՛ք արդյոք, որ Սուրբ Սահակ Պարքն Հայրապետը և Սուրբ Մեսրոպ Մաշտոցը Աստվածաշունչ մապյանից առաջինը հայերեն թարգմանել են հենց Առակների առաջին բողերը. **«Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանձրի խոսքերը»:**

Եզրափակե՛ք այս պարապմունքը աղոթքով՝ խնդրելով, որ Աստված իմաստություն շնորհի ընդանիքի բոլոր անդամներին, որպեսզի իրենց առօրյա կյանքում կայացնեն ճիշդ որոշումներ:

## ԵՂԻԱ.

### ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է ԼՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ



ԻՇԱՐԺԱՆ ՏՈՂ

«Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, և ես ճանաչում եմ նրանց. և նրանք զալու են իմ ետևից. և ես նրանց կտամ հավիտենական կյանք. և նրանք չեն կորչի հավիտյան. և ոչ ոք նրանց իմ ձեռքից չի հափշտակի»:

*Հովհաննես 10:27-28*



Սողոմոն թագավորի հաջորդներից մեկն էր Աքաար թագավորը: Նրա կինը՝ Շեղաբեկը, չը հավաքում Ասպծուն: Իրականում, նա հավաքում էր Բահադի կուրքին և նա համոզեց Աքաարին և Իսրայելից շաբերին, որ իր կրոնը ճշմարիվ է:

Այդ ժամանակ Եղիա մարգարեն փորձեց համոզել Իսրայելին, որ չերկարագեն Բահադին, այլ իրենց հույսն ու հավաքը դնեն Տեր Ասպծո վրա: Եղիան ապացուեց, որ Բահադի մարգարեները սուր մարգարեներ են և հրամայեց նրանց սպանել:

Շեղաբեկը բարկացավ Եղիայի վրա: Վերջինս իր կյանքը փրկելու համար փախավ անապար: Նա կանգ առավ մի ծանրի տակ և խնդրեց Ասպծուն, որ

վերցնի իր հոգին: Ապա ննջեց այդպետ: Վրենանալիս նա հանդիպեց հրեշտակին, որը կերակուր ու ջուր էր բերել նրան: Հրեշտակը երկու անգամ եկավ, կերակրեց նրան և քաջալերեց, որ հանգստանա: Այնուեւը, Եղիան քառասուն օր ու գիշեր քայլեց մինչև հասավ Տիրոց Քորեք լսոր, ուր և գիշերեց քարայրում: Տերը հարցրեց նրան, թէ՝ ի՞նչ է անում: Եղիան պարախանեց, որ ճշմարիվ մարգարեներից միայն ինքն է մնացել և որ իր թշնամիները վինդրում են իրեն, որ սպանեն:

Ասպարագ ասաց Եղիային, որ թողնի քարայրը և կանգնի լսուան վրա, որովհեւը Ինքը շուրջով անցնելու է այդպեղով:

Ուժեղ հողմ անցավ, այնքան ուժեղ, որ ճնշքեց լսուները և կորքեց ժայռերը: Բայց Տերը քանու մեջ չէր: Շեպո երկրաշարժ եղավ, բայց Տերը երկրաշարժի մեջ ևս չէր: Նաշորդը կրակն էր: Բայց Տերը կրակի մեջ չէր նույնպես: Ի վերջո, համակ լսություն փիրեց: Երբ Եղիան հանդիպեց այս լսությանը, իր դեմքը ծածկեց կաշվե վերարկուով և գնաց, կանգնեց քարայրի մուտքի առջև:

Ասպարագ զրուցեց Եղիայի հետ՝ հարցնելով նրան, թէ՝ ի՞նչ էր ամում քարայրում և կրկին անգամ լսեց Եղիայի բողոքները իր վիճակի մասին: Ապա Ասպարագ վկաց նրան մի շաբթ շաբ հսկակ հանձնարարություններ. Եղիան պետք է գնար

Դամասկոսի անապափ և օծեր Ազայելին՝ որպես ասորիների թագավոր, ապա Նեուին՝ Խորայելի թագավոր, և Եղիսեին՝ որպես մարզարե իր փոխարեն: Ասքված ասաց, որ այս երեք մարդիկ

կսպանեն բոլոր նրանց, ովքեր ընդդիմանան Եղիային, և պիտի փրկվեն նրանք, ովքեր Բահաղին չեն երկրպագի:

## ԱՐԵՎՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



**Մարդու -** մարզարեները անհապներ էին՝ առարված Ասքծո կողմից, ովքեր հոչակում էին Տիրոջ կամքը Իր ժողովրդին, հորդորում նրանց հավաքարիմ մնալ Ասքծուն: Նաև Քրիստոսի զալուստի և առաքելության մասին մարզարեանալ, Ով պիտի զար աշխարհին փրկություն և մարդկությանը նոր կյանք բերելու համար:

## ՄԱԾԵԼՈՒ ՀԱՍԱՐ

### Լոռիքյան ձայնը

Մեր կարդացած պարմության վերջում Եղիան կարող էր ընդրություն անել: Եղիան մեզ բոլորիս նման ուներ ազափ կամք: Նա կարող էր անել, ինչ Ասքված պարմիլիք էր իրեն՝ զնալ և օծել Ազայելին, Նեուին և Եղիսեին, կամ փախչել լրված հանձնարարականներից: Եթե շարունակենք կարդալ Եղիայի մասին պարմությունը **Գ. Թագավորությունների** գրքում, կդեսնենք, որ Եղիան ընքրեց Ասքծո կամքը կարգարելը: Եվ սա այն պարճառով, որ լսեց Ասքծուն: Բայց նա ինչպես լսեց Ասքծուն:

Շեփաքրքիր է, որ Ասքված չկար հողմի, երկրաշարժի կամ կրակի մեջ: Ասքվածաշնչային մյուս պարմություններում Ասքծո ներկայությունը հաճախ ուղեկցվում է քամու, երկրաշարժի կամ կրակի միջոցով: Մենք հակված ենք Ասքծո մասին մրածել երկյուղածությամբ, և երբեմն Ասքված հայքնվում է Իր ժողովրդին շափ ապշեցուցիչ եղանակներով: Սակայն այս պարմության մեջ Ասքված եկավ Եղիայի մոփ լոության մեջ: Ասքվածաշունչը պարմում է մեզ, որ լիակապար անդորրի ձայն եղավ և Եղիան լսեց լոությունը: Մենք սովորաբար չենք կարծում, որ լոությունը երբեւ կարելի է լսել: Որքան բարօրինակ է, որ Ասքված պետք է զար Եղիայի մոփ այս ձեռով: Կարո՞ղ եք հիշել Ասքվածաշնչից մեկ որիշին, ում Ասքված այցելեց լոության մեջ:

Երբեմն մենք պետք է լուս լինենք, որպեսզի լսենք Ասքծուն: Միշտ չէ, որ Ասքված հայքնվում է մեզ կրակի բոցի մեջ, կամ Էլ քամու պոտքման ու երկրաշարժի ցնցման ժամանակ: Բայց երբեմն, եթե պարզապես ունկնդիր ենք, կարող ենք լսել Ասքծուն

լուսաբան մեջ:

Մփածենք ձեր առօրյա կյանքի մասին: Որքա՞ն հաճախ ենք լսում մարդկանց՝ ծիծաղելիս և խոսելիս: Ի՞նչքան հաճախ ենք լսում երաժշտություն, կամ գնացքի, մեքենաների և բեռնագրաբների ձայնը: Աղջուկը մեր կենցաղի արդյունքն է: իրականում, ապրելը աղմկով զրադարձունք է: Մենք կարող ենք հեշտորեն մփացրվել, սակայն այն կղմվարացնի ուրիշներին լսելը: Երբեմն թվում է, թե մենք պարզապես չենք կարող զբնել լիակատար լուսաբան: Եվ, այնուամենայնիվ, կան պահեն, երբ ավելի լավ է լուս մնալ և լսել՝ «հանդարբնեցնելու» համար մեր կյանքը:

### **Ինչպե՞ս պետք է վարվեր Նարեն**

Նարեն իրաշալի անձնավորություն էր: Մարդիկ սիրում էին նրա շուրջը լինել, միշտ լսել նրա պարմած զվարճալի պարմությունները և կիսել իրենց փորձառությունը նրա հետ:

Բայց երբեմն Նարեն զգիտեր, թե երբ լուս մնար: Նրան հաճախ հանդիմանում էին իր ուսուցիչները, որովհենքն նա խոսում էր դասի ընթացքում և խանգարում մյուսներին, հավկապես, երբ նրանք փորձում էին կարդալ կամ կենդրոնանալ թվարանական վարժությունների վրա: Երաժշտության դասին նա շարունակ սպիտում էր երգչախմբի ղեկավարին նորից սկսել, քանի որ իր խոսելը ցրում էր մյուս երգիչների ուշադրությունը, որով երգչախմբին չէր հաջողվում երգել ճիշդ նորաները: Սակայն Նարենի մեծագույն խնդիրն այն էր, որ նա շաբ խոսելու պարճառով թերանում է լսել նաև իր համար իրոք անհրաժեշտ խրապները:

Մի օր Նարեն և իր դասընկերները պետք է հանձնեին շաբ կարևոր քննություն: Քննության արդյունքները պիտի որոշեին, թե ով պիտի կարողանար փոխադրվել հաջորդ դասարան: Ուսուցիչը շեշտեց, որ աշակերդները պետք է շաբ ուշադիր լսեն իր գրած հանձնարարականները, քանի որ աննշան սխալի դեպքում կարող են կդրվել սպուզողական քննությունից:

Սովորականի պես Նարեն շաբախտում էր ուսուցչի կողմից հանձնարարականներ գրալու ժամանակ, բայց նա ինքնավսրահ էր, որ լսել է ուսուցչի գրած ցուցումները: Մի քանի շաբաթ անց քննության արդյունքներն սպացվեցին: Նարեն անբավարար սպացավ, որովհենքն ուշադրությամբ չէր հեփսել ուսուցչի գրած հանձնարարություններին:

- ❖ Ի՞նչ եք կարծում, Նարեն ի՞նչ սովորած կլինի սրա արդյունքում:
- ❖ Ի՞նչ պետք է աներ Նարեն, որպեսզի դառնար ավելի լավ լսող: Ինչպե՞ս նրա ընկերները կօգնեին իրեն:
- ❖ Ի՞նչ խորհուրդ դուք կդայիր Նարենին:





## Իրապես դուք ի՞նչ էիք ասել

Երբեմ պարահել է ձեր կյանքում, որ մեկին մի բան ասեք և շաբաթներ անց պարզվի, որ ձեր ասածը բերներերան անցնելիս բոլորովին իմաստափոխվել է և նույնիսկ հակառակը սրբացվել:

Օրինակ՝ կարող եք մեկին ասել. «Գևորգը և ես զնացինք ֆիլմ դիմելու, բայց գրեսանք, որ այն հիմար ֆիլմ է»: Գևորգը կարող է ձեր ասածը պարմել երրորդ անձի, վերջինս չորրորդ անձի և սա էլ հինգերորդին: Այն ժամանակ, երբ վեցերորդ մարդուն պարմեն ձեր ասածը, խոսքը աղավաղվելով ամբողջովին ուրիշ իմաստ ձեռք բերած կլինի: Այդ պարագայում Գևորգից միայն կարող եք պարզաբանում սրբանալ հարցմելով. «Ն՛յ, ինչո՞ւ ես բոլորին ասել, թե ես հիմար էի այդ ֆիլմը դիմելու համար»:

Նույնիսկ, երբ մենք չենք բամբասում կամ քննադարում մյուսներին, հնարավոր է, որ մեր խոսքերը սխալ կերպով մեջքերվեն, կամ էլ՝ ում հետք, որ մենք խոսել ենք, թերացել է մեզ ուշադիր լսել: Միայ մեջքերվելիս կարող ենք անակնկալ հայքնվել անախործ իրավիճակի մեջ՝ առանց նախապես զիգակցելու եղելությունը:

Զեր ուսուցիչը կառաջնորդի ձեզ խաղալու, թերևս, շաբերիդ հայքնի և շաբերիդ կողմից սիրված «փշացած հեռախոս» խաղը: Խաղալուց հետո դրեսե՛ք, թե արդյո՞ք «հեռախոսագանգ» սրբացած վերջին մարդը լսել է նույն պարմությունը, ինչ առաջին անձն ասել էր: Եթե պարմությունը փոխվել է, ապա՝ ինչո՞ւ: Սա ի՞նչ է ասում մեր լսելու ընդունակության մասին: Նաև սա ի՞նչ է ասում բամբասանքի մասին:

## Մեծ Պահքի շրջանն իրրև լսելու ժամանակ

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վրոնացույցի համաձայն, ամեն դարի Զարկի փոնից 40 օր առաջ Ավագում է դարձաւ ամենաերկար պահեցողության շրջանը՝ Մեծ Պահքը: Ջրիսկոնյաների համար սա մի ժամանակահարված է, որի ընթացքում Եկեղեցին իրավիրում է մեզ նախապարասպրվել դիմավորելու մեր Տեր Նիսու Ջրիսկոնյան Սուրբ Նարության փոնը: Ինչպես դարձաւ մեջ պարահող պահքի մյուս շրջաններում, Եկեղեցին մեզ քաջակերում է առավել հաճախակի աղոթել, սովորականից ավելի շաբ ուսումնասիրել Աստվածաշունչը, ընթերցել սրբերի վարքը և պարբերաբար հաճախել Եկեղեցական արարողություններին: Մեզ նաև ատիք է դրվում վերանայել մեր կյանքի ընթացքը, անդրադառնալ Ասպծո առաջ և ուրիշների հանդեպ մեր զործած մեղքերին, ներում խնդրել նրանցից, ում հանդեպ մեղանչել ենք, և ներողամբություն առաջարկել մեր դեմ մեղանչողներին և ինքներս հանձն առնել բարեփոխելու մեր կյանքը:



## ԴԱՍ 13

Այս պատրաստության ժամանակաշրջանում մենք նաև պահը ենք պահում՝ իրաժարվելով մսեղեն և կաթնեղեն բոլոր գրեսակի սննդամբերից, որով կարծես ինքներս մեզ համար կարգապահություն ենք սահմանում: Մեզ համար շատ ավելի լավ կիխներ, եթե ինքներս մեզ կարգապահության ենթարկեինք ոչ միայն այն առումով, թե ինչ է մարդում մեր բերանը՝ ուգելու համար, այլև՝ թե ինչ է դուրս գալիս մեր բերանից:

Ուգելիքից պահը պահելիս պետք է նաև մեղքից պահը պահենք, ներառյալ բամբասանքը, չարախոսելը, հակառակվելը, անուշադրությունը, ինչպես նաև Վսփծուն և որիշներին ուշադիր լսելու մեր անկարողությունը: Իրականում, եթե մենք թերանում ենք հեռանալ մեր մեղքերից և դեպի մեղքը դանող վարդեցողությունից, լոկ ուգելիքից մեր պահեցողությունը որևէ օգբակարություն չի ունենա:

«Հակառակության և կրիվների մեջ եք պահում և բռնցքահարում գլարին», - կարդում ենք **Եսայու մարգարեակության 58:4-8ա** համարներում: «Խսկ իմ ինչի՞ն է պետք այդպիսի ծոնապահության օրը. դուք պիտի զար բողոքեք ինձ, և ես չպիտի լսեմ ձեզ ...: Այդպիսի ծոնապահությունը չէ, որ ես ընդունեցի, - ասում է Տերը, - քանիքի անիրավության հանգույցը, խորվակիր քո վաճառականական խարդախությունն ու բռնությունը, ներիք ու արծակիր նեյյաներին և պատրիք բոլոր անիրավ մուրհակները: Քաղցածներին բաժանիք քո հացը և անօթևան աղքաղներին դարձ քո դունք. եթե մերկ մարդ գեսնես՝ հազցրու նրան, բայց քո ընդուների զավակին մի՛ անդեսիք: Այն ժամանակ այզարացի պես պիտի ծավալվի քո լույսը, և արագործեն պիտի հասնի քո ապարինումը»:

**Ուշադիր լսեք ճեք ուսուցի հանձնարարությունները՝ Մեծ Պահքի օրացույց պատրաստելու համար:**

## ՔՏՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ո՞վ եք Աքաար թագավորը: Ո՞ւմ հետք նա ամուսնացավ: Ինչո՞ւ եք Աքաարի կինը պատուհաս դարձել Իսրայելի համար:
2. Ո՞վ եք Եղիան: Ի՞նչ արեց նա՝ զայրացնելով Աքաարի կնոջը: Ինչո՞ւ Եղիան փախավ անապավ:
- 3ա. Ո՞րն եք Եղիայի բողոքը Վսփծուն:
4. Ինչպե՞ս Վսփված հայփնեց Ինքն Իրեն

5. Եղիային: Ինչո՞ւ Վսփծուն հայփնությունը այդքան գարբեկ եղավ, քան Նրա նախկին հայփնությունները:
6. Վսփված ի՞նչ հանձնարարեց Եղիային անելու: Եղիան ո՞ւմ օծեց: Վսփված ի՞նչ ասաց նրանց մասին, ովքեր մերժեցին հետևել Աքաարի կնոջ օրինակին:

## ԶԵՐ ՏԵՏՐԱԿՈՒՄ

«Եկագրելը հետևեց Բահադ չասպծուն: Բահադը կուոք էր՝ նյութական մի կերպարանք, որը իրականում գոյություն չուներ:

Մարդիկ այսօր էլ գրակալին երկրպագում են կուոքերի, չնայած դրանք շատ գարբեր են Բահադից: Փողը, անրարոյականությունը, թմրանյութերը, ոգելից խմիչքները, իշխանությունը, համբավը կամ հանրահայք լինելը կարող են դառնալ չասպվածներ որոշ մարդկանց համար:

Գրելք օրաթերթի որևէ հոդված, որը պատմում է, թե ինչպես մեկն ընկնում է լուրջ վորձանքի մնչ՝ իր հույսը և հավաքը դնելով այլ բաների վրա և ոչ՝ Տեր Վսփծուն: Որոշ դիմումներ կարաբեք, թե ինչպես «չասպվածն» անկարող է օգնություն կամ միխթարություն ապահովել:

## ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

**ԸՆՏԱՆԻԿԱՆ այս պարապմոնքի համար պետք է ունենալ Ասրբածաշունք:** Նաև ունեցենք նախապես պարապմոնքի թղթե թագ՝ կորպած երկար սրբարարությոց, իրար փակցված կամ սոսնձված ծայրերով: Ընդանիքի անդամները կարող են զարդարել թագը մարդկանքներով կամ ներկերով: Նաև այս պարապմոնքի համար պետք է շորի մի մեծ կորո՞ր որպես վերաբերություն, և երկար փայտ կամ ծող, որը ծառայի իբրև մարգարեի իշխանության «զավազան»:

**Ընդանիքով հավաքվելուց հետո կրկնեցենք ԳԹ-ազավորությունների 19:11-13 հարվածը, որպես Ասրբած խոսում է Եղիայի հետ անդորրի՝ զրեթե լուրջան մեջ: Եղիան պետք է լսեր, որպեսոք Ասրբած խոսեր իր հետ: Նա պետք է պարապմոնքուն և համբերությամբ դառներ լուրջունը:**

Միասին մուտքերեք Շին Կորակարանի մեկ այլ պարմություն, որը վերաբերի Դավիթ մարգարեին և մեծ թագավորին: Դավիթը մեծ մեղք գործեց՝ սիրահարվելով ամուսնացած կնոջը՝ Բերսաբեին: Նրա հետ ամուսնանալու նպագակով նա Ուրիային՝ նրա ամուսնուն, ուղարկում է ճակարտանարդի առաջին զիջ՝ հուսալով, որ նա պիտի սպանվի այնպետք:

Նարան մարգարեն ընդդիմացավ Դավիթին այս մեղքի պարմառով՝ պարմելով նրան մի իրաշալի պարմություն: Բարձրածայն կարդացեք այս պարմությունը Բ Թ-ազավորություններ 12:1-15 հարվածում: Նշեք հավկապես 13-րդ համարը: Շիշեցրենք ընդանիքին, որ Դավիթը Խորայելի ամենաշապ իշխանություն ունեցող անձն էր: Քննարկենք մի քանի այլ եղանակներ, որոնցով Դավիթը կարող էր արձագանքել Նարանի խոսքերին: (**Նա կարող էր պարվիրել նրան լուր մեալ կամ իրաժարվել նրան լսելուց կամ պարմել նրան իր համարձակ մեղադրանների համար**):

Դիմա թող ընդանիքի անդամները փոխենքինիս խաղան Նարանի և Դավիթի դերերը՝ պարկերելով առճակարումը և հնարավոր հակահարվածներ Դավիթի կողմից: (**Դավիթի դերը խաղացողը պետք է**



դնի թղթե թագը, Նարանը պետք է հազնի երկար վերաբերություն և կրի զավազան):

Կակառակությունները դերակարգարելուց հետո թեմադրենք Դավիթի իրական վերաբերմունքը: Ցոյց դրվեք, որ չնայած Դավիթը մեղանչեց, սակայն իր լուր մնալու և Նարանի խիստ հանդիմանությունները լսելու պարապմառությունը նրա բնավորության մասին մեզ այլ քան է ցոյց փալիս:

Մեր Եկեղեցու և մեր ժողովրդի մեծանուն և ամենասիրելի սրբերից Գրիգոր Նարեկացին (947-1003 թթ.) իր ամբողջ կյանքն անցկացրեց Նարեկա վանքում՝ աղոթքով, առաքինի և ճգնակենցաղ վարքով, ուսանելով և ուսուցանելով, ինչպես նաև գրական գործեր գրելով ու վերջապես աճելով և առաջադիմելով սրբության և իմաստության մեջ:


## ԴԱՍ 13

Գրիգորը Խոսրով Անձնացու կրթուեր որդին էր՝ ծնունդով Վասպորական աշխարհի Ուշքունյաց զավարի Նարեկ զյուղից: Կրթությունն սրացել և իրը կուտակրոն հոգևորական դասպիարակվել է Նարեկավանքի բարձր գրիպի դպրոցում՝ վանահայր և ուսուցչապետ Անանիա Նարեկացու խնամակալությամբ: Նարեկավանքի վանական լինելու պատճառով սրացել է «Նարեկացի» անվանումը:

Գրիգորը հաճախ է առանձնացել Վանա լճից հարավ, Նարեկավանքից հյուսիս զբնվող լեռան ճգնարան-քարայրում և բանասրեղծի իր ներանձնացումն ապրել: Շնորհայտության մեջ աղոթքով Ասքծո հետ հաղորդակցվելով ներշնչվել է և սրեղծել «Մարյան ողբերգության» հրաշագործ աղոթքափերը:

95 զիսից բաղկացած երկն աղոթքի ձևով արքահայրված խոսք է՝ ուղղված Ասքծուն «Ի խորոց սրբի խոսք ընդ Ասքությոյ»: Իր հավաքի ու խոսքովանության զիրքը որբան ինքնապարում է, նույնքան էլ համապարում՝ մեղքից ու արագից գրառապող մարդկության փրկության ճիզերի մասին: Ինքնամաքրման ճանապարհը անկեղծ խոսքովանությունն է, մեղքերի զդշումը, որը և ընքրել է մեծ վարդապետը: Բայց արագներն ու մեղքերը անքանակ են, անկշռելի ու անսահման: Նրանք ավելի են, քան ծովերի բազմակուրակ ավազուրների մանրահարդիկները և ավելի ծանր, քան Արարագ լեռը: Սուրբ Գրիգոր Նարեկացին, այս աշխարհի մեղքերի ծանրաթևությունից հուսահարված, խոսքովանում է, որ մարդուն կործանումից ազափողն ու նրա փրկիքը միայն Ասքված է, Ով որբան հեռու է և անմաքելի, նույնքան էլ մոլորդ ու անբաժանելի: Սուրբը հավաքում է, որ քավությունն ու ինքնամաքրությունը գրանում են դեպի Ասքված, հնարավորությունը ընձեռնում անբաժանելիորեն Տիրոջը միանալ և հասնել Նրա լույսին:

Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը մեզ սովորեցնում է ապրել սրբակենցաղ՝ մեղքերից հեռու կյանքով, ինչպես նաև հիշեցնում առանձնության ու լուրջան մեջ Ասքծուն և մեր խղճի ձայնը լսելու մասին: Եվ այսպես վարժվելով՝



մենք կարող ենք վարժվել լուս մնալ, որպեսզի կարողանանք լսել Ասքծո՝ մեզ հետ խոսելը՝ զուցելու համար և այլ իր կամքի խորն ընկալումով, որը գլուխ է ունենում, եթե մենք գրամադրում ենք Նրան մեր ամրող ուշադրությունը:

Մինչ այս պարապմունքն ավարտելը քաջալերեք ընդունիքի յուրաքանչյուր անդամի ամեն օր ժամանակ հավկացնել լուս մնալուն և «Ասքծո ներկայության մեջ» զբնվելուն, գոնե մի քանի բռպելու: Ցուրաքանչյուրը պես է անհապական մոլուցում ցուցաբերի: Շատ երեխաներ կարող են ամեն օր պարզապես մի քանի բռպել «հանդարք ժամանակ» անցկացնել ծնողների հետ և լսել նրանց խրագները:

## ԱՄՈՍ ԵՎ ՕՍԵԵ. ՄԵՐ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ



**ԻՇԱՐԺԱՆ ՏՈՂ**

**«Քայց արդ մնում են հավատ, հույս, սեր. սրանք՝ երեքը. և  
սրանցից մեծագույնը սերն է»:**

**Ա Կորնթացիներին 13:13**

Եղիան շաբ դժվարություններ կրեց Իսրայելի թագավորների հետ հարաբերվելիս, որովհետև թագավորությունը, որը Դավիթն այնքան ջանադիր աշխափեց միավորել, Սողոմոնի մահից հետո բաժանվեց երկու մասի՝ հարավային թագավորության՝ Հուդայի, և հյուսիսային թագավորության՝ Իսրայելի: Դակառակ այն փաստի, որ Դավիթի հաջորդը նստեց հարավային թագավորությունում, Տերը դեռևս փորձում էր հոգ փառել Իր ժողովրդի մասին Իսրայելում՝ առաջնորդելով նրանց կառավարիչներին մարզարեների միջոցով: Մարզարեները առաքվում էին թագավորին հայտնելու Տիրոջ խոսքերը: Այս մարզարեներից երկուսն էին Ամոսը և Օսեեն:

Տերորվամ Բ թագավորի իշխանության սկզբում Տերը կանչեց Ամոսին: Նա ճնվել էր հարավում, Հուդայի մոտ, որպես նա հովհակ էր: Ամոսն ուներ դժվարին պարբականություն, քանզի այդ ժամանակ ժողովուրդը դադարել էր հետեւել Տիրոջ պարվիրաններին: Դասարակության վերնախավը շլացել էր հարստությունից և ապավինում էր իշխաններին և արքաներին՝ Տիրոջ փոխարեն: Մինչեւ հասարակության ավելի ցածր խավերն ապրում էին աղքաքության մեջ և չունեին իրենց որևէ պաշտպան կամ դեպի Տերն առաջնորդող:

Այսպիսով, Տերը ցանկացավ, որ Ամոսը գնա հյուսիս՝ դեպի Սամարիա՝ Իսրայելի մայրաքաղաք, և Տերորվամ Բ թագավորին հայտնի Տիրոջ զայրույթի և սպասվելիք անհրաժեշտ փոփոխությունների մասին: Ամոսն ասաց արքային և ժողովրդին, որ Տերը կամենում է, որ նրանք արդար



գործեն, քանզի Տերը փեսել է, թե ինչպես են աղքաքները խարվում մթերքի արժեզրկված գներից, մինչդեռ հարուսավները խնչույքներ են վայելում: Տերը չի մոռանում աղքաքներին, որի համար պիտի բարեփոխի նրանց կյանքը: Բարեկեցիկ ապրողները պիտի անհարմարավելության մեջ ապրեն: Կուրքերին ապավինելը և նրանց պարզին շինված զրհաւելանները պիտի խորբակվեն և օպար բանակները ավերակների պիտի վերածեն նրանց փղոսկրյա պալավները: Սրանից Տերորվամ Բ թագավորը կարաղությամբ լցվեց, չնայած Ամոսն իր մարզարենության մեջ



ընդգրկել էր Տիրոջ ծրագիրը ապագայում ապագայում վերականգնելու համար: Նա չէր ցանկանում լսել Ամոսին: Նաև, արքան զգաց, որ Ամոսը, լինելով Հուդայի հարավային թագավորությունից, ոչ մի իրավունք չուներ Խարայելիք ապագայում թելաղրել, թե

ինչպես պետք է վարվի: Ամոսը վարպետ Խարայելիք և վերադարձավ իր տուն, Հուդայի երկիր:

Օսենն փոխարինեց Ամոսին՝ Տերորովամ թագավորի իշխանության վերջին դարվագ ընթացքում: Ի դարձերություն Ամոսի, Օսենն ուներ երկու ակնհայտ առավելություններ: Նա Խարայելիք էր և նրա պարզամիտ փոխանցման եղանակը ավելի կարենկցողական էր, քանի որ նա ողբերգություն էր կրել իր անձնական կյանքում: Տերն ասել էր նրան ամուսնալ Գոմեր անունով մի կնոջ հետ, ով

անբարոյական կյանք էր վարել: Իր ամուսնության ընթացքում Օսենն պայքարել էր իր կնոջ անհավաքարմության դեմ: Զավակ ունենալու հետո Գոմերը լրեց նրանց և անհավաք գիրնվեց Օսենին: Փոխանակ պարզապես մոռանալու նրա մասին կամ զայրանալու նրա վրա, նա հետևեց Տիրոջ ցուցումներին: Նա փնտրեց իր կնոջը և գիրնելու հետո վրուն բերեց:

Օսենն թվարկեց Խարայելի մեղքերը, և ցույց տվեց Տիրոջ և Իր ժողովրդի հարաբերությունների խորունկ լինելու: Տերը սիրում է Իր ժողովրդին նախանձախնդրորեն, ժողովուրդը նույնպես պետք է սիրեր իր Տիրոջը, բայց նա այդպես չվարվեց: Տիրոջը սիրելու և ապավինելու փոխարեն, խարայելացիները իրենց հույսը և հավաքը ողբեկ էին կուրքերի վրա, որոնց կերպել էին իրենց սեփական ձեռքերով: Տերը, Ով սպեղծել էր նրանց և որպես մանուկներ մեծացրել, դարձել էր անձանաչելի՝ որպես նրանց պահապան և խնամող: Խրականում, Խարայելը ուրացել էր Ասպետուն, բայց Ասպետած չէր ուրացել Խարայելին: Օսենի անձնական կյանքի նմանությամբ Ասպետած վարվում էր Խարայելի հետ, իբրև անհավաքարիմ ամուսնու հետ, և միաժամանակ փնտրում նրան սիրո խանդով: Ասպետած պահում է ուխտը, անկախ նրանից, թե Խարայելը քանի անզամ կդրժեր այն:



## ԱՎԱՏՔԸ ԳՈՐԾՈՎ

### Արդարություն փնտրելով

Չնայած Ամոսը և Օսենն ապրել են 2700-2800 տարի առաջ, նրանք շար բաների հանդիպեցին, որոնց մենք շարունակում ենք հանդիպել նաև այսօր: Շարերը հարաբություն և ունեցվածք էին դիզում կարիքավորների հաշվին: Մինչ աղքաքները սովոր մեջ էին՝ սննդամբերը գնել չկարողանալու պարճառով, հարուստները շարունակ վարդնում էին իրենց ունեցվածքը: Եվ հակառակ մարգարենների հորդորների, քչերն իրենց հոգագրար սերը ցուցաբերեցին աղքաքներին՝ նրանց հանդես արդարություն գործելով և օժանդակություն մաքուցելով:

Արդարության կարևորությունը բննարկելու փոխարեն ձեր ուսուցիչը ձեզ հետ միասին դասը կկազմակերպի աղքաքներին և կարիքավորներին սարարող գրեղական բարեգործական գրասենյակներից մեկում: Ձեզ նաև կդրվեն գրեղեկություններ, թե ինչ պիտի անեք ձեր այցի ընթացքում, իսկ ձեր փորձառության դարձարմությունները կգրանցվեն մագյանում:



## Արդարության նախանձախնդիր տիպար

Սուրբ Հովհաննես Օծնեցի Կաթողիկոսը Հայ Առաքելական Եկեղեցու սրբերից է՝ Եկեղեցու հայրապետներից մեկը: Ծնվել է Գուգարքի Տաշիրք գավառի Օծուն զյուղում 650-ական թվականներին, ազնվական ընտանիքում: Աշակերտել է Թեոդորոս Զօրենավոր վարդապետին, 675 թ. նաև՝ Դավիթ Անհաղթին: Հովհաննես Օծնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընդրվել 717 թ. և 11 դրահի՝ մինչև իր կյանքի վերջը, գահակալել Դվինում, որը 485 թվականից հայոց հոգևոր նոր կենտրոնն էր:

Պարմվում է, որ երր Հայաստանի մարզպան նշանակված արար ոսպիկանը Դամասկոս է վերադառնում, մեծ զովեսպով է խոսում իր ամիրապետին Հայոց Կաթողիկոսի բացառիկ վայելչության մասին, ինչը շարժելով ամիրապետի հետաքրքրությունը նրան Դամասկոս է հրավիրում: Եվ ահա Հովհաննես Կաթողիկոսն իր ամրող փառքով՝ փայլուն ու շքեղ զգեստներով, սպիրակահեր մորուսը ոսկեփունջ կազմած, ոսկեզարդ զավազանով, ներկայանում է ամիրապետին: Վերջինս իրապես հիացած ու զարմացած է մնում Օծնեցու արդասովոր զեղեցկությամբ: Սակայն, միաժամանակ, ակնարկել է փալիս, թե իր իմացած Դիսուս մարզպարեն հեզ ու պարզ մեկն է եղել, և իին առաջնորդներն իլ այդպիսին են եղել. հապա ինչպէս կլինի, որ նրանց հեգևողը այսպես շքեղ է զգեստավորվում: Կաթողիկոսը պարասխանում է, որ իր ասածները ճիշդ են, միայն թե հները ժողովրդի վրա ազդելու համար հրաշագործության զորություն են ունեցել: «Խսկ մենք, - ասում է Սուրբ Հայրապետը, - այդ զերբնական կարողությունից զուրկ ենք, մարդկանց վրա ազդելու կամ մեր խոսքը ազդու դարձնելու համար պարփակոր ենք դիմել այդ արդարին միջոցներին: Խսկ եթե իմ ներքին կյանքի մասին կուզես զաղափար կազմել, հրամայիր, որ ներկաները հետանան, ու ես թե առանձին

բացադրենմ»: Եթք մնենակ են մնում, Հայրապետը նրան ցույց է տալիս ներսից հազած այծի կոչք ու կարծը զգնասները: Ամիրապետը զարմանում է, թե ինչպես մարդկային մարմինը կարող է տանել այդպիսի դժոխային քորձը: Հայոց Հայրապետի մասին նրա հարգանքը և համարումը ավելանում է, և ըստ արևելյան թագավորների սովորության ասում է. «Ուզի՞ր, ինչ սիրող կկամենա, պիփի տամ քեզ»: Կաթողիկոսն ատիթը հարմար նկագելով՝ խնդրում է երեք բան, որոնք վերաբերում են քրիստոնյա մեր ժողովրդի բարեկեցությանը և մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը:

## ԱՅՍ ՏԱԾԵԼՈՒ ՀԱՍՏԱՐ

### Նոր պատվիրան

Մեծանալիս մենք սկսում ենք հասկանալ, որ սերն ավելին է, քան զգացմունքը, իսկ ավելի ճիշդ այն սկզբունք է, որով կարգավորվում են մեր փոխարարերությունները Ասքծոն և մարդկանց հետ:

Մեզ համար Ասքծոն սերն է օրինակ հանդիսանում բոլոր տեսակի գործողությունների ժամանակ: Իրապես, Շովիաննես առաջյան իր առաջին թղթում գրում է. «Նա, ով չի սիրում, չի ճանաչում Ասքծուն, քանի որ Ասքված սեր է» (Ա Շովիաննես 4:8): Ասքված հայփնում է մեզ Իր սերն այն հսկակ իրողությամբ, որ Նա սփեղծեց մեզ Իր պարկերով և նմանությամբ: Նա հայփնում է մեզ Իր սերը՝ առաքելով Իր միածին Որդուն՝ Շխուս Քրիստոսին, մեզ հնարավորություն տալու վերահասպագել սիրո ներդաշնակ հարաբերությունը, որ մենք կորցնում ենք մեղք գործելիս: Ասքծուց մենք սովորում ենք, որ սերը զոհաբերվող է, կարեկցող և համբերող: Օսեի մարգարերության գրքում տեսնում ենք, թե ինչպես սիրո պակասը պարբառ դարձավ, որ մարդիկ անարդար վարվեն՝ հավաքային աղքափների և կարիքավորների նկարմամբ: Ուրիշների նկարմամբ մեր վերաբերմունքը պես է լինի արդահայպությունը Ասքծոն՝ մեզ պարզեցած սիրո, ինչպես նաև այն սիրո արդահայպությունը, որ ունենք Ասքծոն հանդեպ:

Շխուս Քրիստոս իր ասածների և արածների առանցքը դարձեց սերը, որը մեզ համար զարմանալի չպիփի լինի: Քրիստոնյաները կոչվում են «քրիստոնյա» նաև նրա համար, որովհետև ձգվում են նմանվել Քրիստոսին՝ Նրան, Ով Ասքված է և Սեր է:

Մարդեւոս 22:34-40 հավաքածում Շխուս Քրիստոփոս տալիս է մեզ նոր պատվիրան՝ սիրել Ասքծուն ամեն ինչից վեր և սիրել ընկերոջը՝ ինչպես ինքներս մեզ, որի համար ասվում է. «Այս երկու պատվիրաններից են կահիւած ամբողջ Օրենքը և Մարգարեները»: «Օրենքը» վերաբերում է Շին Կրակարանում Ասքծոն՝ Իր ժողովրդին տալ շատ պատվիրաններին, որի կենքրոնը Տասնաբանյա պատվիրաններն էին՝ արձանագրված Ելք 20:1-17 համարներում: Քրիստոս նոյնպես ասում է, որ մարգարեների գործի բարձրակետը նոյնպես արմագավորված էր այս նոր պատվիրանում: Կարսորելով օրենքին հետևելը և մարգարեներին ուշադրություն դարձնելը՝ Շխուս Քրիստոս սովորեցնում է մեզ, որ եթե թերանանք սիրել Ասքծուն և մեր ընկերոջը, օրենքը և մարգարեները դառնում են անիմասը:

**Ա. Կորնթացիներին 13:1-13** համարներում Պողոս առաքյալը վայիս է մեզ սիր հրաշալի սահմանումը: Ներքեւի բաց թողնված գողերում բերեք օրինակներ, թե դուք ինչպես կարող եք այս հարգածի յուրաքանչյուր գողը գործի վերածել ձեր անձնական կյանքում:

- ❖ **Ա Կորնթացիներին 13:4** Սերը համբերող է, քաղցրաբարո, սերը չի նախանձում, չի ամրարփավանանում, չի գոռոզանում:

---



---



---

- ❖ **Ա Կորնթացիներին 13:5** Սերը անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի զրգում, չար բան չի խորհում:

---



---



---

- ❖ **Ա Կորնթացիներին 13:6** Սերը անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարգության վրա:

---



---



---

- ❖ **Ա Կորնթացիներին 13:7** Սերը ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավաքում է, մշգրապես հույս է փածում, ամեն բանի համբերում:

---



---



---



## ԴԱՍ 14

### ՔՆԻԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ինչպե՞ս էին կոչվում հյուսիսային և հարավային թագավորությունները:
2. Ո՞վ էր Տերորովամ Բ թագավորը և ո՞ր թագավորությունն էր կառավարում:
- 3ա. Ի՞նչ խնդիրների և անարդարությունների առջև կանգնեց Խորայելը:
4. Ո՞վ էր Ամոսը: Ինչո՞ւ նա մերժվեց:
5. Ամոսի զրքում Տերը ինչպե՞ս էր պատրաստվում պատասխանել Խորայելի գործած մեղքերին:
6. Ո՞վ էր Օսենն:
7. Օսենի զրքում Տերը ինչպե՞ս էր պատրաստվում պատասխանել Խորայելի անհավաքարմությանը:
8. Երկու ի՞նչ առավելություններ ուներ Օսենն: Ինչո՞ւ էր Օսենն ավելի կարեկցող:
9. Օսենի միջոցով Տերն ի՞նչ հայդնեց Իր ժողովրդի հետ հարաբերությունների առնչությամբ:

### ԶԵՐ ՏԵՏՐԱԿՈՒՄ

Մաքրելու 5:44 համարում Հիսուս Քրիստոս ասում է մեզ. «սիրեցնի ձեր թշնամիներին»: Սա թերևս ամենադժվար պատվիրանն է մեզ համար՝ հասկանալու և պահելու համար, հարկավես այսօրվա աշխարհում, ուր շաքերը արհամարհում են մյուսներին, պարզապես որովհենքն նրանք «ուրիշ» են:

Գրեցենք համարով շարադրություն՝ մանրամասնելով ձեր վերաբերմունքը Քրիստոսի այս պատվիրանի առնչությամբ: Ինչպե՞ս կարող եք գործադրել այս պատվիրանը ձեր անձնական կյանքում:

### ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

**Ընտանեկան այս պարապմունքի համար** անհրաժեշտ է ունենալ Աստվածաշունչ, զրիշներ կամ մարդիքներ, սոսինձ կամ կաչուն ժապավեն: Ընդանիքի յուրաքանչյուր անդամի համար ապահովեք նաև երեք կիրոր թուղթ և մեկ հափ մեծ թուղթ, որի վրա երեք կիրորները գլուխվորվեն:

Ընդանիքով հավաքվելուց հետո կրկնեցնեք այն պարճառները, թե ինչո՞ւ Տերորովամ թագավորը մերժեց լսել Ամոս մարգարեին: (Ամոսը մի խնդճ զյուղացի էր «սպորադասկած» Հուդայի հարավային թագավորությունից, և Խորայելի գոռող թագավոր Տերորովամը արժանի չէր համարում նրան լսել):

Կարդացնե՛ք Ղուկաս 4:16-30 համարները և հետո քննարկե՛ք հետևյալը.

❖ Սկզբում ժողովուրդը անհամբերությամբ ունկնդրում էր Հիսուսին: Ինչո՞ւ սա փոխվեց:

(Սկզբում ժողովուրդը հիացած էր: Նրանք հպարփանում էին իրենց «համաքաղաքացի երիտասարդի» ուսուցանելու և քարոզելու կարողությամբ: Բայց երբ Հիսուս ասաց նրանց բաներ, որոնք նրանք չին ցանկանում լսել, օրինակ՝ որ վրկությունը միայն նրանց համար չէ, այլ նաև ոչ իրեաների, նրանք այնքան բարկացան, որ կամնենում էին սպանել Նրան):

❖ Ո՞րն է քարքերությունը Խորայելում Ամոսի քարոզելու և Նազարեթի ժողովարանում Հիսուսի քարոզելու պատմությունների միջև: (Ամոսը «օպար» էր Խորայելացիների համար, մինչդեռ Հիսուս գրնվում էր Իր հարազար համարադարացիների մեջ: Բայցևայնապես, երկուսով էլ դարձան անընդունելի, եթե իրենց լսողներին դվեցին «անցանկալի» պարզամ: Այսպիսով, թվում է, թե կարենոր չէ, թե ով է պարզամախոսը: Եթե

պարզամն այն է, ինչ ժողովուրդը չի ցանկանում լսել, ապա քարոզիչը խնդիրներ կունենա):

❖ Որո՞նք են այն բաները, որ մենք չենք ցանկանում լսել մեր կյանքում: Ինչո՞ւ ենք երրեմն մերժում մեզ ասված խոսքերը, նոյնիսկ, եթե դրանք սեփական բարիքի համար են: Ինչո՞ւ է կարևոր լսել, եթե անգամ ուղերձը չի համընկնում մեր լսելու ցանկության հետ:

❖ Արդյոք մենք նման ենք Ամոսին չսող Խրայելի ժողովրդին և Նազարեթի ժողովարանում Շխուսին չսող մարդկանց: Երբսէ դժվարանո՞ւմ ենք լսել Տիրոջ խոսքը: (Այո՛, այդպես կարող է պարահել: Նրանց նման մենք հաճախ չենք ցանկանում փոխել մեր կյանքը կամ մփածել մյուս մարդկանց մասին, քան ինքներս մեր: Մենք պեսք է վարժվենք լսել, թե Աստված ինչ է ասում մեզ և հիշել, որ այն, ինչ Տերն է ասում մեզ, մեր սեփական բարիքի համար է, նոյնիսկ, եթե չենք ցանկանում լսել այն):

**ԱԿորնթացիներին 13:4-7** համարներում Պողոս առաքյալը նկարագրում է սիրո մասին Տիրոջ ուսուցումները: Թող ընդանիքի յուրաքանչյուր անդամ ընդուրի երեք նախադասություն սիրո մասին՝ Սուրբ Պողոսի գրածներից: Այս երեք նախադասություններից յուրաքանչյուրը պեսք է գրի առնել երեք կփոք փոքը թղթերի վրա: Գրելոց բացի, յուրաքանչյուր նախադասություն պեսք է զարդարվի զծանկարով, կարծ բանասփեղծությամբ կամ ուրիշ այլ եղանակներով:

Ընդանիքի յուրաքանչյուր անդամ պեսք է գրի «Աերն այն է» բառերը մեծ թղթի եջի վրա: Երեք փոքը թղթերը պեսք է այսուհետև սոսնձվեն մեծ թղթի վրա: Վերջում ընդանիքի յուրաքանչյուր անդամ պեսք է բոլորին բացաբրի, թե ինչ է գրել կամ նկարել:

Պարապմոնքը եզրափակեք միասին աղոթելով, որ Աստված օգնի պահպանել և զորացնել ձեր ընդանիքի կարողությունը՝ սիրելու և լսելու Աստվծուն և միմյանց:



## **ԵՍԱՅԻ, ՄԻՔԻԱ. ԲԱՐԵՇՐՋԵԼՈՎ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**



**ԻՇԱՐԺԱՆ ՏՈՂ**

**«Հույսդ ղիք Տիրոց վրա ու բարություն գործիր, բնակվիք  
երկրում և արածիք նրա լճարձակության մեջ: Պաղատիք  
Տիրոջը, և նա քեզ կտա սրտիդ ուզածները»:**

**Սաղմոսներ 36:3-4**

Խրայելի ոխերիմ թշնամիներից էր Ասորեստանը: Երբ ասորեստանցիների գործը մոդեավ Խրայելին, Հուդայի հարավային թագավորությունը, գեսնելով Խրայելի անհավաքարմությունը, պետք է պարտապատճեն լիներ լսելու Տիրոջը: Բայց Հուդայի ժողովուրդը շարունակում էր հեռանալ Տիրոջից: Ինչպես Խրայելը, այնպես և Հուդայի Աքազ թագավորը չհեփսնեցին Տիրոջ շավիդներին և հրաժարվեցին լսել Տիրոջ նախազգուշացումները, որոնք հայրնում էր Եսայի մարգարեն:

Եսային ծնվել էր Երուսաղեմում, ազնվականի ընփանիքում: Նա բանասպելով էր և քաղաքազեկ: Բայց երբ Ասպիված կանչեց նրան մարզարեն լինելու, նա ականաքես եղավ թե՛ Ասպծո ներկայությանը և թե՛ Նրա ներողամբությանը: Նրան գետիքի մնջ երևաց Տերը՝ շրջապարփած հրեշփակներով՝ սերովեներով: Ցուրաքանչյուրն ուներ վեց թե. երկու թեսերով նրանք ծածկում էին իրենց դեմքերը, երկուսով՝ իրենց ուրքերը և մյուս երկուսով էլ՝ ճախրում: Նրանք ճայնակցում էին իրար և ասում. «Սուրբ, սուրբ, սուրբ է Զորությունների Տերը, և ամբողջ երկիրը լի է Նրա փառքով»: Եսային խորապես փափափութեց այս գետիքից և, հիշելով իր խսկ մեղքերը, աղաղակեց. «Վայ ինձ. ես մի գրառապած մարդ եմ. ինչո՞ւ եմ ապշած կանգնել մնացել. չէ՞ որ ես մարդ եմ, պիդ շորթեր ունեմ և պղծաշուրթ ժողովուրդների մեջ եմ ապրում, բայց ահա իմ աչքերով գետա Զորությունների Տիրոջը»: Սերովեներից մեկը Տիրոջ գոհասնդանից ունելիով

վերցրած գրաք ածուխի կայձը մոդեացրեց Եսայու շորթերին և ասաց. «Դա կիանի քո անօրենությունները, և քո մեղքերը կարի քեզնից»:

Տիրոջ ներկայությամբ մեղքերի թողություն սպանալուց հետո Եսային, ով հաճախ հարաբերվել էր թագավորների և իշխանների հետ, սկսեց խոսել Տիրոջը հաճելի հարավության և պահեցողության մասին: Ժողովուրդը զոհեր էր մաքուցում Ասպծուն՝ միաժամանակ արհամարիելով աղթափներին: Եսայու միջոցով Տերն ասաց, որ երբ Հուդայի ժողովուրդն իր ձեռքերը բարձրացնի առ Ասպիված, «Ես կփակեմ իմ աչքերը քո առաջ»: Եսային նրանց ասաց, որ երբ նրանք զոհեր են մաքուցում, Տերը ոչ մի ուրախություն չի գրնում նրանց մեջ, որովհետև նրանք մոռացել են Տիրոջը: Նրանք կարիք ունենին լվանալ իրենց արյունով ձեռքերը, հեռու վանել իրենց չար գործերը և արդարություն գործելը դարձնել իրենց նպագակ՝ ուղղելով իրենց սիսամները և լսելով աղթափների աղերսանքը:

Եսային գրանցվեց Աքազ արքայի հավաքի պակասությունից: Լսելով Տիրոջ խոսքերը և



**Եսայի մարգարեն**  
Երևան, ձեռ. 982, էջ 44ա,  
Ծաշոց, 1450 թ., Արծկե,  
ծաղկող՝ Միքայել

ականափես Խորայելի դեմ ասորեսպանցիների սպառնալիքին՝ Աքազը պետք է ապավիճներ Տիրոջը և հորդորեր Հուղայի ժողովրդին վերադառնալ Նրա ճանապարհներին: Փոխարենը՝ նա պայմանագիր կնքեց Ասորեսպանի թագդաթաղաղասար թագավորի հետք: Աքազը ոչ միայն իր հույսը դրևաց օրար արքայի վրա Տիրոջ փոխարեն, այլև երկրպագեց կուռքերին, կրակի միջով անցկացրեց իր հարազար որդիներից մեկին և փոփոխություններ կարարեց Տաճարում, որպեսզի վայելի ասորեսպանցիների բարեհաճությունը:

Աքազի մահից հետո նրա որդի Եզեկիան դարձավ Հուղայի թագավոր: Կարճ ժամանակ անց ասորեսպանցիները բանակները կործանեցին Խորայելի թագավորությունը: Ինչպես Ամոս և Օսեն մարգարեները զգուշացրել էին, խորայելացիների սեղանները և պալատները ավերվեցին, քանի որ ժողովուրդը մերժեց վերադառնալ դեպի Ասրված: Եզեկիա թագավորը վճռեց հավաքարիմ մնալ Տիրոջը և լսեց Միքիա մարգարեին:

Ի դարբնություն Եսայո, Միքիան համեսպ ծագում ուներ, և նրա պարզամներն ընդդեմ հարուստների արքահայրում էին իր խոկ սեփական աղքափությունը և դառապանքները: Միքիայի միջոցով Տերն ասաց Հուղայի ժողովրդին. «Ին ժողովուրդ, ես ի՞նչ եմ արել ձեզ: Պարասիանե՛ք ինձ»: Տիրոջ հետք իրենց ուխտին հավաքարիմ մնալու փոխարեն Հուղայի ժողովուրդը անարդարացիորեն խեց աղքափների վները և ունեցվածքը: Իրենց առաջնորդները՝ թագավորները, քահանա-

ները և որոշ մարգարեներ այլասերվել էին: Միքիան հորդորեց մարդկանց փոխելու իրենց ընթացքը, որպեսզի Հակոբին խոսքացված Տիրոջ հավադարմությունը վկայվի ամբողջ Հուղայում:

Եզեկիան կրոնական բարեփոխումներ նախաձեռնեց ժողովրդի մեջ: Այն ժամանակավոր բնույթ կրեց, որովհետք Ասորեսպանի Սենեքերիմ թագավորը և նրա զորքը արշավում էին դեպի Երուսաղեմ: Տեղեկանալով բանակների մովենալու մասին՝ Եզեկիան ամրացրեց քաղաքի պաշտպանությունը՝ 548 մետր երկարությամբ թունել շինել դրալով, որ ավելի քան 5,5 անգամ երկար է մերօրյա ֆուրբոյի դաշտից: Երբ ասորեսպանցիները մովենացան Երուսաղեմին, Հուղայի բնակիչները բավական ուժելիք և ջուր ունեին: Երուսաղեմի պարհապներից դուրս ասորեսպանցի արքան փորձեց զրգուել Եզեկիա թագավորին՝ սպառնալիքներ փեղալով և ասելով. «Թույլ մի՛ դվեք, որ ձեր Ասրվածը խարի ձեզ»: Եզեկիան չնայած վախեցավ իր կյանքի համար, բայց և հասքափուն մնաց՝ մերժելով հաշփության դաշինք կնքել Ասորեսպանի թագավորի հետ, և փոխարենը ապավիճնեց Տիրոջը և աղոթեց ազագագրության համար: Ասորեսպանցիների շրջափակումն ավարփեց, երբ Տերը պարուիս ուղարկեց նրանց վրա՝ ոչնչացնելով 185,000 մարդ: Ասորեսպանի զորքը մեծ կորուսպներ կրելով՝ ի վիճակի չեղավ պայքարը շարունակել և սրիալված նահանջեց, ու Երուսաղեմը փրկվեց:

## ՏԱԾԵԼՈՒ ՑԱՄԱՐ

### Զգույշ, վտանգավոր է

Եթե դեսներ մի ցուցանշան, որը զգուշացնի ձեզ վերահաս վրանգի մասին, վսրահարար որևէ քան կձևունարկեք: Միայն անմիտը կարհամարի զգուշացումը: Վրանգավորության ազդանշանին նայելը մեզ սպիթպում է զնահապել իրավիճակը և փոխել մեր մովենցումը:

Եսային և Միքիան վրանգի ազդանշան էին հնչեցրել: Բայց Աքազը շարունակում էր անմտորեն զորձել և հրաժարվեց իր դիրքը փոխել: Եզեկիան, մյուս կողմից, ուշադրություն դարձրեց վրանգն

աղաղակող ձայնին՝ իմասպուն կերպով փոխեց իր ընթացքը և քաջալերեց մյուսներին վարվել նոյն կերպ:

Մենք այս փոփոխությունն անվանում ենք զդում՝ «դարձ» կամ «արմագրական փոփոխություն» մեր մըածողության և արարքների մեջ: Երբեմն մենք դարձի ենք զայս արագ, երբեմն ել՝ մեր կյանքում փոփոխություններ կապարելը ժամանակ և աղոթք է պահանջում:

Որպես քրիստոնյաներ՝ մենք ապրում ենք այս աշխարհում, բայց մենք կանչված ենք այս աշխարհի իմասպությունից վեր կանգնելու և Ասպծո իմասպությունն ընդունելու: Նեփենելով աշխարհիկ բարոյական սկզբունքներին կարող ենք դեմ հանդիման կանգնել վրանգավոր իրադրությունների և հարաբերությունների առջև: Մեզ համար հեշտ է խարվել մրգածելով, որ մեզ հանդիպած վրանգի նշանները դեղում չեն: Կյանքն ապրելով մշտական զդումով՝ շարունակ պետք է ինքներս մեզ հարց գրանք, թե ինչ է Քրիստոս ակնկալում մեզանից, այլ ոչ թե ինչ են մյուսները ակնկալում մեզանից: Այս պարագային մենք կարող ենք «դարձի զայ» ամենաժմվար իրավիճակներում:

### **Կարո՞ղ է արդյոք Հասմիկը փոխվել**

Հասմիկն անում եր ամեն ինչ, որպեսզի հանրահայր լիներ, առաջ ընկներ մյուսներից և լիներ «լավագույնը», որի պարբառով հաճախ եր հայրնվում անախործ իրավիճակներում: Նոյնիսկ նրա ընկերները զիրեին, որ մինչև նա չփոխեր իր պահվածքը, մշտապես լուրջ անհանգստությունների մեջ պիտի հայրնվեր:

Նեփենելով ձեր ուսուցի դրված ցուցումներին՝ քննեք Հասմիկին հանդիպող հեփեյալ իրավիճակները: Ի՞նչ վրանգ է սպառնում յուրաքանչյուր իրավիճակին: Ի՞նչ դժվարությունների առջև կկանգնի Հասմիկը, եթե չկարողանա շրջանցել այդ վրանգները: Ի՞նչ խորհուրդ կարող եք դրա նրան՝ փորձելով մի բան փոխել կամ «շրջել» նրա մըածողության մեջ:

❖ Հասմիկի հայրը ծխախով է զբնում նրա սենյակում և զգուշացնում նրան որա վրանգի մասին: Բայց Հասմիկը համոզված է, որ ծխախովն իր վրա լուրջ, բացասական ազդեցություն չի կարող գործել:

❖ Հասմիկի ընկերուիին հեռացվել է դպրոցից սպախոսության պարբառով: Հասմիկը նոյնպես խարել է, բայց նա պարծենում է, որ ինքը երբեք չի բռնվել և մըաղիր է շարունակել խարելը:

❖ Հասմիկի դրամիկը սիրում էր նրան իր հետ պարագների դրամել, բայց Հասմիկը կարծում է, որ այն իզուր ժամանակի կորուսի է, և սա խորապես վիրավորում է նրա դրամիկին: Հասմիկին չի հետաքրքրում նրա զգացումները:

❖ Հասմիկը հաճախ ժամանակ է անցկացնում քաղաքի ամենավանգավոր մասերում, բայց նա համոզված է, որ իր հետ ոչ մի վար բան չի պարագի:





## Ո՞ւմ եք ապավիճում

Այս դասի բնաբանը՝ Սաղմոս 36:3-4 համարները, պարունակում են երկու պարզվիրաններ և երկու խոսքումներ:

Նախ՝ մեզ ասվում է. «Ճույսդ դիր Տիրոջ վրա և բարություն գործիր»: Եթե ապրենք այս կանոնով, մենք «կրնակվենք նրա երկրում», այսինքն՝ կփեսնենք, որ Աստված երբեք չի լրի մեզ:

Երկրորդ՝ մենք հրավիրված ենք «ուրախանալ Տիրոջով»: Կրկին, եթե այս անենք, մեզ խոսքացվում է, որ Աստված կպարզենք մեզ մեր սրբի ուզածներն ու օրհնությունը:

Զդումից հետո Եսային գերազանցապես ապավիճեց Տիրոջը: Մինչ նրա քարոզած ճշմարգությունները բարկացնում էին շաքերին, ովքեր չէին ցանկանում հետևել Աստծո պարզվիրաններին կամ ովքեր անհոգ էին աղքաբների և կարիքավորների հանդեպ, Եսային երբեք չդադարեց ցնծալ Տիրոջով, ուզ առարապես օրինեց նրան:

Մեր կյանքում շաբ մարդիկ կան, ովքեր պարբռասփ են մեզ օգնել, եթե միայն մենք ապավիճենք նրանց: Բայց մենք երբեմն դժվար ենք համարում այն անել և հաճախ առավել դժվար՝ Աստծուն ապավիճելը, Ում նույնիսկ չենք կարող դրեսնել: Սակայն «դարձի զալը» ճշգրտորեն ենթադրում է, որ մենք մեր հույսը պետք է դնենք Աստծոն և այն անձանց վրա, ովքեր սիրում են մեզ, խնամում են մեզ և անում ամեն ինչ մեզ օգնելու համար, որպեսզի աստվածահաճ կյանքով ապրենք:

**Ուշադիր լսեք ձեր ուսուցի տված հանձնարարությունները՝ վարելու «վստահության քայլեր» խաղը:**

**Խաղի ավարտից հետո քննարկեք հետևյալը.**

- ❖ Ես ի՞նչ սովորեցի այս վարժությունից:
- ❖ Ինչպես ցոյց տվեցի իմ վստահությունը՝ «Վստահության քայլեր» խաղի առաջնորդի և նրանում մյուս ընդգրկվածների նկարմամբ:
- ❖ Արդյոք ինքնավարակ էի, որ առաջնորդը և մյուսները ազնիվ էին ինձ հետ և իրապես հոգ էին դրանում իմ ավահովության համար:
- ❖ Ինչպես կարող եմ իմ կյանքում կիրառել այս փորձառությունը ծնողների, ընկերների, եղբայրների և քույրերի, ուսուցիչների, հոգևորականների, հարեանների և այլոց նկարմամբ:
- ❖ Ինչպես կարող եմ կիրառել այս փորձառությունը ինձ հանդիպած իրավիճակներում, որի մեջ չեմ կողմնորոշվի ինչպես վարվել: Ինչպես կարող եմ ավելի վստահել Աստծուն և մյուսներին:



**«Ապաշխարեցե՛ք, որովհետև  
երկնքի արքայությունը մոտ է»**

Ահա դարձա այն ժամանակը, երբ մենք սկսում ենք մբածել մեր ընդունիքին և ընկերներին նվերներ դրալու մասին: Իհարկե, բոլորս սիրում ենք նվերներ սպանալ, բայց մեր սիրած անձին «կապարյալ» նվեր ընդունելը միշտ լի համեմի պարփականություն է:

Իրական, կապարյալ նվերը, որը մենք սպասում ենք, ինչեւ, Շիսուս Քրիստոսի պարզեն է, Ով աշխարհ եկավ հորդորելու մեջ բարեփոխվել և ապաշխարել: Սա այն պարզամն է, որ Սուրբ Շովիաննես Մկրտիչը՝ Շիսուս Քրիստոսի զարմիկը, քարոզում էր իրեն լսողներին, մինչ Քրիստոս կսկսեր իր առաքելությունը երեսուն դարեկանում. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտենել է» (**Մատթեոս 3:2**):

Բայց, ինչպես որևէ նվերի պարագային, մենք ազատ ենք այն ընդունել կամ մերժել: Ասդված հեշտ չի համարում Իր Որդուն աշխարհին նվիրելը: Այս իսկ պարճառով Քրիստոսի ծննդից հարյուրավոր դարիներ առաջ Եսային մարգարեացավ Նրա ծննդի մասին՝ ասելով. «Քանզի մեզ համար մանուկ ծնվեց, մի որդի վրավեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի. նա պիտի կոչվի Մեծ խորհրդի հրեշտակ, Սքանչելի խորհրդակից, Ասդված հզոր, Խշիան, Հայր հանդերձյալ աշխարհի» (**Եսայի 9:6**):

Մեծ Պահքի շրջանում հաճախ մբածեք ձեր կյանքի մասին: Ինչպե՞ս կարող եք ապաշխարել: Ի՞նչ վկանգի նշաններ կան ձեր շուրջը և ինչպե՞ս կարող եք դրանցից խուսափել: Ո՞ւմ, Տիրոջից բացի, կարող եք վսփահել և ապավինել առաջնորդվելու համար: Ինչպե՞ս կարող եք օգնել մյուսներին դարձի զալ:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ո՞վ էր Թագդաբաղասարը:
2. Ո՞վ էր Եսային և ո՞րն էր նրա պարզամքը:
3. Ո՞ր փորձառությունը փոխեց Եսայու կյանքը:
4. Ո՞վ էր Աքազը և ինչպե՞ս զրգոեց Տիրոջ բարկությունը:
5. Աքազը ի՞նչ որիշ բան կարող էր անել:
6. Ո՞վ էր Միքան և ո՞րն էր նրա պարզամքը:
7. Ո՞վ էր Եզեկիան և նա ինչպե՞ս պարասիանեց Տիրոջը:
